# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 45 (1295) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 16, 2006
VOLUME 26, NO. 45 (1295) SATURDAY, DECEMBER 16, 2006

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ՄԻԱՅՆ ԹԷ ՅԱՆԳԻՍՏ ԹՈՂՈՒՆ ԴՐՍԵՑԻՆԵՐԸ

*ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ*

Վարչապետ Հարիրիի անարգ սպանութենէն ետք, Լիբանան մատնուեցաւ ներքին եւ արտաքին քաղաքական անօրինակ տագնապի մը, որ տակաւ շարունակուեցաւ այլ անձնաւորութիւններու սպանութեամբ: Այդ տագնապը շարունակուեցաւ որպէս թէ ծրագրուած այլ 36 անձնաւորութիւններու դէմ կատարուելիք սպանութիւններու բանդագուշանքներով: Այդ հոգեվիճակի հետեւանքով՝ անձնաւորութիւններ իրենց կեանքի ապահովութեան համար սկսան յաճախ զգուշանալ դուրս գալ իրենց կեդրոնատեղիներէն:

Իսրայէլեան բանակի 12 Յուլիսի 2006-ի ձախող արշաւանքը ուժերու նոր յարաբերութիւններ ստեղծեց երկրէն ներս: Երկրի Հարաւը ու հոն իշխող Հըզպալլան ընդդիմադիր դիրքերէ մեկնած՝ գլուխը անցած ժողովրդական հսկայ խաղաղ բազմութեան մը, այժմ, կը պահանջէ Սինիորայի կառավարութեան հրաժարականը:

Կառավարութիւնը, որմէ Հըզպալլան քաշած էր իր նախարարները, կ'ամբաստանուի իբրեւ գործակալ ԱՄՆ-ի եւ Իսրայէլի: Սինիորան իր մնացորդաց նախարարներով այսօր աւելի քան տասը օր է կը մնայ Վարչապետարանի պալատէն ներս արգելափակուած, կեանքի ապահովութեան պատճառաւ: Շրջափակումը պիտի շարունակուի մինչեւ կառավարութեան անկումը: Տրամադրութիւն չկայ որեւէ զիջումի:

Կառավարութիւնը իրեն յենարան ունենալով ԱՄՆ-ի եւ Փարիզի նեցուկը՝ իր կարգին, ամուր կը մնայ իր մերժողական դիրքերուն վրայ: Ան նաեւ կը հաւատայ, որ «բոլոր պետական հարուածները ձախողած են Լիբանանի մէջ»: Սինիորայի կառավարութիւնն ու անոր Տիւրզի, Սիւննի եւ քրիստոնեայ համարեա բոլոր համայնքները, անտարակոյս, անհրաժեշտ որոշումներ առնելու նախասեմին կը գտնուին: Կան մտահոգիչ մազլցումներ: Կրնան եւ նոր մազլցումներ արձանագրուիլ կողմերու միջեւ երկիրը վերստին արհինայեղութեան մատնելու համար:

Այս բոլորի դիմաց շատ ջնջին կը թուին ըլլալ դրական երկխօսութիւններու կարելիութիւնները:

Օրինակ, Սուտանի լուծման առաջարկութիւններով լեցուն պատուիրակ Մուսթաֆա Իսմայիլի առաքելութիւնը մատնուեցաւ անփառունակ ձախողութեան Լիբանանէն մինչեւ Սուրիա:

Այժմ կը սպասուի Արաբական Լիկայի Ընդհանուր Քարտուղար Ամին Մուսայի միջնորդութեան, որ նոյնպէս չի ներշնչեր մեծ յոյսեր:

ԱՄՆ փաստօրէն կողմնորոշուած ըլլալուն, չկրնար հաշտարար

*Շար.ը էջ 13*

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐՈՒ ՆՈՐ ԱՐՇԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԵՆ «ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԺԻՐԱՅՐ ՍԷՖԻԼԵԱՆ ԵՒ ՎԱՐԴԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

*Դեկտեմբերի 9-ի գիշերը 15 զինուած դիմակաւորներ ներխուժած են Երեւանի ճաշարաններէն մէկը, ուր իր կնոջ եւ ընկերներուն հետ կը գտնուէր «Ազատագրուած Տարածքների Պաշտպանութիւն» կազմակերպութեան ղեկավար Ժիրայր Սէֆիլեան: Ամենավտանգաւոր յանցագործի նման Լիբանանահայ ազատամարտիկին պառկեցուցած են գետին եւ ձերբակալած ներկաներու առջեւ: Դիմակաւոր իրաւապահները Սէֆիլեանին տեղափոխած են անոր գլխաւորած «Արաքս-Կուր» հիմնադրամի կենտրոնական գրասենեակ, ուր խուզարկութիւն կատարելէ ետք առգրաւած են համակարգիչներն ու այլ իրեր:*

*Արցախեան պատերազմին իր բերած մասնակցութեան առթիւ Սէֆիլեան առաջին աստիճանի Մարտական Խաչի շքանշանակիր է եւ ունի փոխգնդապետի կոչում:*

*Նոյն օրը, խուզարկութիւն կատարուած է «Հայ Կամաւորական Համախմբումի» 40 անդամներու բնակարաններէն ներս: Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) աշխատակիցները ներխուժած են «Հայրենիք եւ Պատիւ» կուսակցութեան քաղխորհուրդի անդամ Վարդան Մալխասեանի բնակարանը եւ կատարած են խուզարկութիւն 2 տարեկան երեխայի եւ անկողինի մէջ հիւանդ կնոջ ներկայութեամբ: Բիրտ ուժի գործածութեամբ կալանաւորած են Մալխասեանին:*



*Լիբանանահայազատամարտիկ Ժիրայր Սէֆիլեան*

*Ըստ ԱԱԾ-ի տարածած յայտարարութեան, կազմակերպութեան ղեկավարներու դէմ յարուցուած է քրէական գործ՝ «ՀՀ Սահմանադրական կարգը բռնութեան փոփոխելուն ուղղուած հրապարակային կոչեր» ընելու մեղադրանքով:*

*Կազմակերպութեան փոխնախագահ Արմէն Եղեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է որ, բացի Սէֆիլեանէն, անազատութեան մէջ են կազմակերպութեան եւս 7-8 անդամներ:*

*«Դեկտեմբերի լոյս 10-ի գիշերը Երեւանում եւ մի շարք մարզերում տեղի են ունեցել բազմաթիւ ձերբակալութիւններ այն կամաւորականների շրջանում, ովքեր Դեկտեմբերի 4-ին համաժողով անցկացրեցին՝ «Հայ Կամաւորականների Համախմբում» ֆորմատում, եւ բացայայտօրէն ծրագրեր առաջարկեցին, որը «Իրաւունք» թերթում շատ մանրամասնօրէն ներկայացուեց», - ըսած է Արմէն Եղեանը: - «Մեղադրանքը բոլորին սա է՝ «դուք ձեր համաժողովի ժամանակ հնչեցրել էք կոչեր, որոնք ենթադրում են իշխանութիւնը բռնի զաւթելու մեղադրանքներ»:*

*Դեկտեմբեր 11-ին մօտ մէկ տասնեակ ընդդիմադիր քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներ խստօրէն դատապարտեցին «Ազատագրուած Տարածքների Պաշտպանութիւն» կազմակերպութեան ղեկավարներէն*

*Շար.ը էջ 4*

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՑՈՅՑ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ



*Հայութիւնը Լիբանանի եւ Հնչակեան Կուսակցութեան դրօշներով ցոյցի ելած է Պէյրութի հայկական թաղամասէն ներս*

*Լիբանանի մէջ կը շարունակուի քաղաքական առճակատումը Հըզպալլահի գլխաւորած ընդդիմադրութեան եւ իշխանամէտ «14 Մարտ» շարժումի համախոհներուն միջեւ:*

*Ընդդիմադրութիւնը իր հարիւր հազարանոց հանրահաւաքներով եւ քաղաքի կեդրոնական մասին մէջ շարունակուող նստացոյցով կը փորձէ տապալել վարչապետ Ֆուատ Սինիորայի կառավարութիւնը, իսկ «14 Մարտի» անկախական շարժումը երկրի տարբեր շրջաններուն մէջ կը կազմակերպէ նոյնքան հսկայ ցոյցեր եւ վարչապետարան կատարուող ժողովրդային այցելութիւններով կը պաշտպանէ օրինաւոր կառավարութիւնը: Առայժմ այս բոլոր գործընթացները կը կրեն ընդհանուր առմամբ խաղաղ բնոյթ, թէեւ անցեալ շաբթուայ ընթացքին արձանագրուեցաւ մէկ մահ, Պէյ-*

*Շար.ը էջ 4*

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ Է

*Կիրակի, Դեկտեմբեր 10-ին Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցաւ սահմանադրական հանրաքուէ: Նախնական արդիւնքներու համաձայն հանրաքուէին մասնակցած է ցուցակներու վրայ ընդգրկուած 90 հազար 77 ընտրողներէն 78 հազար 389-ը կամ 87,02 տոկոսը:*

*Սահմանադրութեան ներկայացուած նախագիծին «Այո» քուէարկած է 77 հազար 279 ընտրող կամ մասնակիցներու 98,58 տոկոսը:*

*ԵԱՀԿ Մինսկի Խումբի համանախագահներու կողմէ, հանրաքուէն արժանացաւ քննադատութեան: Յայտարարութեամբ մը անոնք եկան ըսելու, թէ Համանախագահները չեն հաւատար, որ այդպիսի հանրաքուէն կը նպաստէ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՆԵՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՒՈՐՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՐԷՇԸ

*«Ի պաշտպանութիւն Ազատագրուած Տարածքների» Նախաձեռնութեան ղեկավար Ժիրայր Սեֆիլեանի ձերբակալութիւնը փաստացի կարող է հանդիսանալ Հայաստանում ներիշխանական պայքարի գագաթնակէտ կամ առնուազն հանգուցային կէտերից մէկը: Բանն այն է, որ ՀՀԿ Յուլիսի 22-ի համագումարից ի վեր բազում քաղաքական գործիչներ եւ փորձագէտներ ՀՀԿ Խորհրդի նախագահ ընտրուած Սերժ Սարգսեանին խորհուրդ են տալիս անպայման նախագահ դառնալ մինչեւ 2007 Թուականի խորհրդարանի ընտրութիւնը, քանի որ դրանից յետոյ նա ընդհանրապէս չի ունենայ նախագահ դառնալու շանս: Այլ կերպ ասած, քաղաքական իստեբլիշմենտի մի զգալի մասը պաշտպանութեան նախարարին արդէն տեւական ժամանակ մղում է յեղաշրջման: Ինչպէս ցոյց է տալիս պաշտպանութեան նախարարի վերջին շրջանի գործունէութիւնը, նա ինքն էլ աւելի ու աւելի շատ է հակւում դէպի արտահերթ նախագահութիւնը, քանի որ ակնյայտօրէն մի կողմ է թողել Հանրապետական Կուսակցութիւնը եւ արդէն մի քանի ամիս է, ինչ զբաղուած է բացառապէս սեփական իմիջով, Հանրապետականին օգտագործելով ընդամէնը որպէս ռեսուրս: Իսկ արտահերթ նախագահութիւն Հայաստանում հնարաւոր է միայն յեղաշրջման միջոցով, քանի որ այդ առումով Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի մօտեցումները տրամագծօրէն հակառակն են: Նախագահը Գագիկ Ծառուկեանի նոր հիւրանոցը հանդիսաւորապէս այն բանի համար չբացեց, որ Սերժ Սարգսեանը նախագահ դառնայ մինչեւ «Բարգաւաճ Հայաստանի» խորհրդարանական կուսակցութիւն դառնալը:*

*Բայց հասկանալի է, որ պաշտպանութեան նախարարին էլ կտրուող կարմիր ժապաւէնները երկրի համար ուրախացնելու փոխարէն թերեւս բաւական գայրացնում էին իր ապագայի կապակցութեամբ: Եւ երբ Սերժ Սարգսեանը խորհրդարանի ամբիոնից յայտարարեց, որ աւելի քան 10 տարի ինքն է ապահովել երկրի անվտանգութիւնը, այլեւս պարզ դարձաւ, որ նա ուղղակի հրապարակում է երկրի կառավարման համակարգում իր գերիշխանութեան մասին: Ու պէտք չէ զարմանալ, որ պաշտպանութեան նախարարը կարծես թէ դրան տրամաբանօրէն հակասող յայտարարութիւն է անում ազգային պատկերասրահում, ասելով, որ Անդրանիկի սուրն ու մեդալները գնել է նախագահից թոյլտուութիւն ստանալուց յետոյ: Սերժ Սարգսեանն այդպիսով ոչ թէ ցանկանում էր ցոյց տալ, թէ ինքը ենթարկւում է նախագահին, յարգում է սուբորդինացիան՝ ինչպէս ինքը կ'ասէր, այլ բոլորի համար հերթական անգամ ակնյայտ էր փորձում դարձնել, որ այլեւս չկայ մի բան, որ Ռոբերտ Քոչարեանը կարողանայ արգելել իրեն: Այսինքն երկրում առկայ են ոչ ֆորմալ յեղաշրջման բոլոր նշանները, իսկ այդ դէպքում ֆորմալացումը դառնում է տեխնիկայի գործ: Բայց ահա այստեղ է, որ կարծես թէ Ռոբերտ Քոչարեանի հակառակորդները կարծես թէ յայտնւում են հիպնոսի տակ: Ինչպէս օրինակ 1999-ի Հոկտեմբերի 27-ին յաջորդած վեց ամիսներին, երբ երկրում ոչ ֆորմալ իշխանութիւնն ում ձեռքին ասես յայտնուեց, բացի Ռոբերտ Քոչարեանից, բայց որեւէ մէկը չհամարձակուեց իր ոչ ֆորմալ իշխանութեանը տալ իրաւաբանական ուժ: Իհարկէ, Հայաստանում իշխանութիւնը կարծես թէ երբեք իրաւաբանական ուժ չի ունեցել: Բայց ամէն դէպքում փաստ է, որ ոչ ոք չուզեց Ռոբերտ Քոչարեանից պաշտօնապէս խլել իշխանութիւնը: Ինչ եղաւ յետոյ՝ յայտնի է բոլորին:*

*Մինչդեռ պաշտպանութեան նախարարը թերեւս այդքան էլ ուշադիր չի ուսումնասիրել այդ ժամանակաշրջանը կամ պարզապէս յայտնուել է Անդրանիկ Մարգարեանի մարտավարութեան ազդեցութեան տակ, ով անհամարձակութեան այդ տարիներին գլխաւոր գործող անձերից մէկն էր: Սերժ Սարգսեանը չշտապեց ֆորմալացնել իր բացարձակ իշխանութիւնը՝ կամ այն իրականում չունենալու, կամ էլ պարզապէս համարձակութիւն չունենալու պատճառով: Մինչդեռ Ռոբերտ Քոչարեանն այդպիսի յապաղումներ չի ներում, եւ Վարդան Օսկանեանը Մինսկի հանդիպումից յետոյ եկաւ Երեւան ու կրկնեց, որ մտադիր չէ 2007 Թուականից յետոյ լինել կառավարութեան անդամ՝ չի ուզում*

**Քոչարեանը Գագիկ Ծառուկեանի նոր հիւրանոցը հանդիսաւորապէս այն բանի համար չբացեց, որ Սերժ Սարգսեանը նախագահ դառնայ**

*նախարար լինել, ուզում է դառնալ նախագահ: Դրանից բացի, յանկարծ աշխատանքից ազատւում են Հանրապետական մարզպետները, ընդ որում նրանցից մէկը Ռոբերտ Քոչարեանի հետ բաւական լաւ ու պատմական յարաբերութիւններ ունեցող Լոռու մարզպետ Քոչինեանը՝ «խփիր իւրայիններին, որ օտարները վախենան»: Դա դեռ քիչ էր, Ռոբերտ Քոչարեանը Արմաւիրի նորանշանակ մարզպետին տալիս է գեներալի կոչում: Եւ ով գիտէ, թէ ուր կարող էր հասնել Ռոբերտ Քոչարեանի կառավարման հերթական աշխուժութիւնը, եթէ չգտնուէր հանգուցալուծման մի տարբերակ: Իսկ ինչպէս ցոյց է տալիս պատմական փորձը, իշխանական համակարգերում յեղաշրջման համար կասկածուողները իրենց միակ փրկութիւնը փնտռում են մեղքն ինչ որ մէկի վրայ դնելու մէջ: Այդպիսով, իրավիճակը որոշակիօրէն հանգուցալուծւում է՝ մեդալուորների որսի ելած Թագաւորը հանդարտւում է, իսկ դաւադիր վեզիրը՝ փրկւում կախաղանից: Այսինքն, յեղաշրջման մեղադրանքով ձերբակալուած Ժիրայր Սեֆիլեանը դառնում է ներիշխանական պայմանաւորուածութիւնների հերթական զոհը, ինչը պէտք է թերեւս մտահոգի հանրութեանը, յատկապէս Շուարցի յայտնի ստեղծագործութեանը ծանօթներին, ընդ որում այն համատեքստում, որ այս հրէշը չի բաւարարուելու մէկ զոհով եւ ամէն մի այդպիսի պայմանաւորուածութիւն հանրութիւնից նորանոր զոհեր է խլելու:*

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*
*«ԼՐԱԳԻՐ»*

# «ԱՋԵՐԻՑ» ՈՄԱՆՔ ՍԿՍԵԼ ԵՆ ԻՐԵՆՔ ԻՐԵՆՑ ՔՆՆԱԴԱՏԵԼ

*2007թ. խորհրդարանական ընտրութիւնների նախաշեմին ընդդիմադիր դաշտում միանգամից մի քանի նոր միաւորումներ ի յայտ եկան, որոնցից մի մասի սաղմնաւորումն, իհարկէ, վաղուց էր սկսուել: Այսպէս, յայտնի է, որ նորաստեղծ ու նորայայտ շարժումներն, ինչպիսիք են «Քաղաքացիական Նախաձեռնութիւնը», «Քաղաքացիական Անհնազանդութեան Շարժումը», համախոհների փնտռտուք էին սկսել դեռեւս ամռան ամիսներին: Այս միաւորումների ստեղծման արանքում՝ Սեպտեմբերին յայտարարուեց նաեւ «Հակակրիմինալ» կոչուող շարժման ձեւաւորման մասին:*

*Յիշեալ բոլոր միաւորումներից շատ աւելի վաղ սկսել էր ձեւաւորուել նաեւ նորայայտ միաւորումներից այն միակը, որը ստեղծուել է բացառապէս գաղափարական՝ ազատական ու ժողովրդավարական գաղափարների հենքի վրայ: Կարծում ենք, հասկանալի է, որ խօսքն «Այլընտրանք» հասարակական-քաղաքական միաւորման մասին է: Իհարկէ, աջ-ազատական ուժերի միաւորման գաղափարը դեռ շատ վաղուց էր շրջանառութեան մէջ դրուել, բայց արդիւնքում «աջ-ազատականների» լիակատար միաւորում ձեւաւորելն այդպէս էլ չստացուեց:*

*«Այլընտրանքն», օրինակ, որը միակն է, որ ձեւաւորուել է գաղափարակից ուժերի հենքի վրայ, այլ կարծիք ունի: Ըստ այդ հասարակական-քաղաքական միաւորման, առանց ռեժիմին ներկայացուող գաղափարական այլընտրանքային ծրագրի իշխանափոխութիւն անելն անհնարին է ու անարդիւնաւէտ, նաեւ անհեռանկարային: Այս իմաստով «Այլընտրանքի» փաստարկներն աւելի համոզիչ են, որովհետեւ գաղափարազուրկ միաւորումները զաւեշտական կոլիզիոների որոգայթում կարող են յայտնուել, ինչպէս օրինակ հենց նոյն «Քաղաքացիական Անհնազանդութիւն» շարժման դէպքում է:*

*Ու թէեւ այսօր վերոյիշեալ շարժում-միաւորումները, որոնք խոշոր հաշուով նոյն նպատակն են հետապնդում՝ տապալել երկրում իշխող ռեժիմը, այդուհանդերձ երբեմն նաեւ փոխադարձ խանդի տեսարաններ են սարքում եւ փնովում մէկը միւսին, այդուհանդերձ, յանուն արդարութեան պէտք է ասել, որ երբեմն գործընկերների հասցէին ուղղուած քննադատութիւնների մէջ ճշմարտութեան չափազանց մեծ չափաբաժին կայ: Մամուլի, այդ թւում՝ անկախ կամ ընդդիմադիր համարուող թերթերի էջերում յաճախ քննադատութեան թիրախ է դառնում մասնաւորապէս «Քաղաքացիական Անհնազանդութեան» շարժումը: Վերջինիս ուղղուած հիմնական մեղադրանքն այն է, որ դրա ձեւաւորումը «դրսի», իսկ աւելի կոնկրետ՝ Ռուսաստանի որոշակի շրջանակների գաղափարն է կամ այդ շարժումը, առնուազն, այդ շրջանակներից է սնւում:*

*Անհասկանալին «Քաղաքացիական անհնազանդութեան» շարժման հետ կապուած այն է, որ այստեղ հաւաքուած մարդիկ, ըստ էութեան, իրար դէմ էլ են յայտարարութիւններ անում: Ասենք, Նոյեմբերի վերջին այս շարժման նախաձեռնութեամբ եւ սահմանադրական հանրաքուէի 1-ամեակին նուիրուած բողոքի ցոյցի ժամանակ, որը տեղի ունեցաւ ՀՀ Սահմանադրական դատարանի շէնքի առջեւ, «Քաղաքացիական Անհնազանդութեան Շարժումը» ՍԴ անդամներին ուղղուած կոչ հրապարակեց, որում անդրադարձ կար մասնաւորապէս նաեւ «Նախորդ» իշխանութիւնների օրօք՝ 1995-ից ի վեր տեղի ունեցած ընտրութիւններին:*

*«Քաղաքացիական Անհնազանդութեան Շարժման» ակտիվիստներից մէկը՝ ԼՂՀ «Երկրապահ Կամաւորականների» միութեան նախագահ Արկադի Կարապետեանն իր ասուլիսում «ոչ մի թիզ հող թշնամուն» մոտիվներով յայտարարում էր, որ շարժման նպատակներից մէկն էլ «գրաւեալ» տարածքների յանձնումը թոյլ չտալն է: Հարց է առաջանում, իսկ Ալ. Արզումանեանն ու Կ. Ռուբինեանը, այդ շարժման մէջ ներգրաւուած միւս «աջերը» այդ գաղափարի հետ համաձա՞յն են: Չէ՞ որ այդ յայտարարութիւնն արւում է շարժման, ուստիեւ՝ նաեւ նրանց անունից: Մինչդեռ հանրութեանը յայտնի է, որ ե՛ւ Կ. Ռուբինեանը, ե՛ւ Ալ. Արզումանեանը գոնէ իրենց պաշտօնավարութեան տարիներին միանգամայն այլ մօտեցումներ ունէին ԼՂ հարցի վերաբերեալ ու, որքան յայտնի է, դրանք անփոփոխ են մնում նաեւ այսօր:*

*Իսկ հետաքրքիր է՝ Ալ. Արզումանեանն ու Կ. Ռուբինեանն էլ ե՞ն այդպէս մտածում: Իսկ իրենք արդեօ՞ք չեն կրում այդ «մութ ու ցուրտ տարիների» պատասխանատուութիւնը: Թէ՞ հիմա հեշտ է ամէն ինչ բարդել Տէր-Պետրոսեանի վրայ՝ մանաւանդ որ դա «անհնազանդութեան շարժմանը» կարող է դիվիդենտներ բերել:*

*ԿԱՐԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ*
*«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*
*(Յապաւումներով)*

***ՄԱՍԻՍ*** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

## ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՕԲԻԵԿՏԻՒ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ՄԷՋՔԻՆ ԿԱՆԳՆԱԾ Է»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:«Եթէ ընդդիմութիւնն այսօր չլինէր, ո՞վ թերթ կը կարդար. ժողովուրդը զզուել է ամէն օր իշխանութիւններից լսել նոյն բաները»,- այս կարծիքն արտայայտեցին «Ազգային Միաբանութիւն» եւ «Նոր Ժամանակներ» կուսակցութիւնների ներկայացուցիչները, որոնք հաւաքուել էին քննարկելու լրագրողի դերն ու նշանակութիւնը հակակրիմինալ շարժման լուսաբանման գործում:

Այս թեմայի շուրջ սա արդէն հինգերորդ լսումներն է, որն անցկացնում է ՆԺԿ նախագահ Արամ Կարապետեանը: Առաջարկ եղաւ նմանատիպ լսումները դարձնել շարունակական, քանի որ ներկաների բնորոշմամբ՝ «շատ փաստեր են կուտակուել եւ դրանք պէտք է մէկ առ մէկ վերլուծել ու քննարկել»:

Ներկայ գտնուող ընդդիմադիր ներկայացուցիչները իրենց բնորոշմամբ «թասիբի էին գցում լրագրողներին, որ կոնկրետ լուսաբանեն այն ինչ լսում են»: «Թէկուզ եթէ ընդդիմութիւնը չերիւրանքներ է տարածում, ոչինչ, թող այդպէս էլ գրուի, թէկուզ եթէ գան ու ձերբակալեն մեզ, աւելի լաւ... միայն թէ գրուի այն, ինչ եղել է իրականում»,- այս մտքի հեղինակը ԱՄ խմբակցութեան անդամ Ալեքսան Կարապետեանն էր:

Իսկ Արամ Կարապետեանը միանշանակ լրագրողներին յիշեցրեց նաեւ, որ «պէտք չէ փչացնել ընդդիմութեանը, դրանով իշխանութիւնների ջրաղացին ջուր կը լցնէք»: «Սակայն, դա չի նշանակում, որ մենք նեղանում ենք մամուլում մեր հասցէին գրուած քննադատութիւնից»,- աւելացրեց ՆԺԿ ղեկավարը:

Ընդդիմադիր գործիչները նաեւ նշեցին, որ որոշ լրատուամիջոցներ վերեւների հրամանով փորձում են պառակտում գցել ընդդիմութեան շարքերում, բայց դա, ըստ ընդդիմադիրների, հնարաւոր չէ, քանի որ իրենց մէջ ներքին համաձայնութիւն կայ:

## ՆՇՈՒԵՑ 1988-Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 18-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ


Երկրաշարժի զոհերու յիշատակին, Շիրակի թեմի առաջնորդը կը մատուցէ հոգեհանգստի պատարագ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Դեկտեմբեր 7-ին լրացաւ 1988 թուականի աւերիչ երկրաշարժի 18-րդ տարելիցը: Ռոբերդ Քոչարեանը աւանդաբար այս օրը այցելում է տասնեակ հազարաւոր զոհեր տուած Գիւմրի: Ժամը 11:41-ին նա ծաղկեպսակ դրեց Անմեղ Զոհերի Յուշարձանին, ինչից յետոյ յայտարարուեց լռութեան րոպէ: Շիրակի թեմի առաջնորդի ձեռամբ մատուցուեց հոգեհանգստի պատարագ:

Պատարագի աւարտին Քոչարեան եւ նրան ուղեկցողները քայլերն ուղղեցին դէպի Գիւմրիի կենտրոնական հրապարակ՝ ընկնելով շարքային գիւմրեցիների հարցերի տարափի տակ: Մարդիկ ամէն տարի այս օրը օգտագործում են իրենց բողոքները երկրի նախագահի մօտ հնչեցնելու համար: Իրար հերթ չտալով՝ գիւմրեցիները բարձրացնում էին հիմնականում սոցիալական հարցեր՝ բնակարանային խնդրին, աւանդների վերադարձմանը վերաբերող:

«18 տարի արդէն տնակների մէջ հաշմանդամ երեխայ եմ պահում. հնարաւոր չէ», - նախագահին դիմեց միջին տարիքի մի կին:

«Պարոն Քոչարեան, մենք 77 տարեկան մարդ ունենք, աւանդները չեն տալիս», - առաջին կնոջը ընդհատելով՝ ասաց մէկ ուրիշը:

«Ընկեր Քոչարեան, շատ ենք խնդրում, օգնէք մեր հանրակացարանի հարցը լուծուի. այսպէս չի լինի», - ասաց երրորդը:

Բոլոր հարցերին Ռոբերդ Քոչարեանը տալիս էր նոյն պատասխանը՝ հարցը կը քննուի՝ լուծում կը տրուի, սպասէք:

Շիրակի մարզպետարանի շէնքում նախապէս ծրագրուած հանդիպումը լրագրողների հետ չկայացաւ: Տեղի ունեցաւ դռնփակ խորհրդակցութիւն, որի աւարտին նախագահը անպատասխան թողեց երկու ժամից աւելի իրեն սպասած գիւմրեցիների հարցերը:

Գիւմրիում հաշուառուած է 6 հազարից աւելի տնակ: Այսօր, սակայն, քաղաքապետարանի քաղաքաշինութեան բաժնի պետ Հրայր Կարապետեանը յայտարարեց, թէ քաղաքում կայ 2000 տնակ, որոնցում «ապրում են հիմնականում անօթեւանները»:

Լրագրողների դիտարկմանը, թէ տնակների թիւը, ըստ լրատուամիջոցների շատ աւելի մեծ է, Կարապետեանը արձագանքեց. - «Քաղաքապետարանը վերջին 6 տարուայ ընթացքում քաղաքից հանել է մօտ 17 հազար տնակ»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ առանձին զրոյցում Հրայր Կարապետեանը ասաց, որ բացի 2000 տնակներում բնակուող անօթեւաններից, եւս 5000 տնակներում բնակւում են անօթեւանի կարգավիճակ չունեցող մարդիկ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ԿԸ ԿԱԶՄԻ 1,261 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

ԵՐԵՒԱՆ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Ներկայումս Հայաստանի արտաքին պարտքը կազմում է 1 մլրդ 168 մլն դոլար, իսկ տարեվերջին այն կը կազմի 1,261 մլրդ դոլար, որից 1 մլրդ 95 մլն-ը՝ կառավարութեան ունեցած պարտքն է, իսկ 166 մլն դոլարը՝ կենտրոնական բանկինը: Ինչպէս Դեկտեմբերի 11-ի ասուլիսում նշեց ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարութեան Պետական պարտքի կառավարման վարչութեան պետ Արշալույս Մարգարեանը, 2007թ.-ին Հայաստանի արտաքին պարտքը կանխատեսւում է 1,369 մլրդ դոլար:

Նրա խօսքերով, հանրապետութեան արտաքին պարտքի սպասարկման «պիկը» արձանագրուել է 1998թ.-ին, երբ այն կազմել է բիւջէի 1/3-ը: Իսկ պարտքի ամենամեծ ծաւալով մարումները նախատեսւում են 2024-25թթ.-երին: Ըստ նրա, այս տարի մարուել է 16,86 մլն դոլարի պարտք եւ 9 մլն դոլար տոկոսավճար, 2007թ.-ին կը մարուի 17,027 մլն դոլարի պարտք եւ 10,01 մլն դոլարի տոկոսավճար:

Ա. Մարգարեանը նշեց, որ Հայաստանը դասւում է պարտքի ցածր բեռ ունեցող երկրների շարքին. պարտքի միջին ժամկէտայնութիւնը 20-25 տարի է, ի տարբերութիւն հարեւան երկրների, որտեղ այն կազմում է 2-3 տարի:

Ա. Մարգարեանը տեղեկացրեց նաեւ, որ ներքին պարտքն այս պահին կազմում է 58 մլրդ 160 մլն 933 հազար դրամ (մօտ 157 մլն ԱՄՆ դոլար): Այդ պարտքի սպասարկումը կազմել է 4 մլրդ 529 մլն դրամ, տարեվերջին կը լինի 5,2 մլրդ դրամ:

## GALLUP. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 73-ՐԴՆ Է 101 ԵՐԿՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Gallup հեղինակաւոր ամերիկեան կազմակերպութեան՝ 101 երկրներում անցկացուած հարցումների արդիւնքներով, Հայաստանը կոռուպցիայի մակարդակով 73-րդ տեղում է:

Վրաստանը ցուցակում 33-րդն է, Թուրքիան՝ 64-րդը, իսկ Ռուսաստանը յայտնուել է 95-րդ տեղում: Միացեալ Նահանգները 19-րդ տեղում է: Ատրպէյճանում հարցում չի անցկացուել:

Աւելի քան 100 երկրների 1000-ական բնակիչների երկու հարց է տրուել՝ «Արդեօ՞ք կաշառառութիւնը լայնօրէն տարածուած է ձեր երկրի կառավարութիւնում» եւ «Արդեօ՞ք կաշառառութիւնը լայնօրէն տարածուած է ձեր երկրի գործարար շրջանակներում»:

Gallup-ի հարցման արդիւնքները վկայում են, որ կոռուպցիայի տեսակէտից իրենց երկրի մասին ամենալաւ կարծիքին են ֆինները, որոնց պետութիւնը գլխաւորում է ցուցակը, իսկ ամենավատ կարծիքին են լիտվացիները՝ նրանց հայրենիքը 101-րդն է:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ 54 ՏՈԿՈՍԸ ԱՂԵՏԱԼԻ ՎԻՃԱԿՈՒՄ Է

ԵՈՒՆԻՍԷՖ-ի տուեալով, Հայաստանի երեխաների 54 տոկոսը գտնւում է աղետալի վիճակում: Այդ տուեալը հրապարակուել է Դեկտեմբերի 11-ին, Երեւանում ԵՈՒՆԻՍԷՖ-ի 60 ամեակի կապակցութեամբ «Աշխարհում Երեխաների Դրութիւնը» զեկոյցի շնորհանդէսի ընթացքում, տեղեկացնում է ԱՌԿԱ-ն: ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցիչ Շելդոն Յետը ասել է, որ որոշ համայնքներում, որ բնակեցուած են ազգային փոքրամասնութիւններով, աղջիկների 20 տոկոսը հիմնական կրթութիւն չեն ստանում: ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցչի խօսքով, հիմնական կրթութեամբ ծնողների երեխաները աւելի շատ հնարաւորութիւն ունեն իրենց ընդունակութիւնները զարգացնելու, քան նրանք, ում ծնողները թերի կրթութեամբ են: Շելդոն Յետը այդպիսով ընդգծել է, թէ ինչքան մեծ կապ կայ երեխաների իրաւունքի եւ կանանց դրութեան միջեւ:

## ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵԿՄ-Ն ԿԸ ՊԱՇՏՊԱՆԻ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՒԱՆ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ - ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ: 2008 թ. նախագահական ընտրութիւններին Երկրապահ Կամաւորականների Միութիւնը կը պաշտպանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը: Այս մասին ԵԿՄ 7-րդ համագումարից յետոյ կայացած մամլոյ ասուլիսում յայտարարեց Միութեան վարչութեան անդամ, պաշտպանութեան փոխնախարար գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբէկեանը:

Լրագրողների խնդրանքով ներկայացնելով իր տեսակէտը, ԵԿՄ վարչութեան նախագահ, պաշտպանութեան փոխնախարար գեներալ-լեյտենանտ Մանուէլ Գրիգորեանը նշեց, որ մինչեւ նախագահական ընտրութիւնները դեռ երկու տարի կայ եւ դեռ շատ բան կարող է փոխուել: Սակայն Արթուր Աղաբէկեանը շտապեց հաւաստիացնել, որ իր եւ գեներալ Մանուէլ Գրիգորեանի տեսակէտները «միշտ համընկել են»:

Ըստ նրա, բանակի եւ ԵԿՄ միջեւ սերտ կապ կայ: «ԵԿՄ վարչութեան բոլոր անդամները առաջին կարգի պահեստազօր են. մենք անելու ենք ամէն ինչ, որ վարչութեան անդամների մեծ մասը կրեն պահեստազօրի աւագ սպայական կոչում, որպէսզի վաղը ձեւաւորուող զօրամիաւորումներում եւ զօրամասերում նրանք զբաղեցնեն հրամանատարի պաշտօն», - նշեց պաշտպանութեան փոխնախարար Արթուր Աղաբէկեանը:

Մանուէլ Գրիգորեանը կտրականապէս հերքեց ընտրութիւնների հետ կապուած ներքաղաքական լարուածութեան ուժգնացման դէպքում բանակը ժողովրդի դէմ դուրս գալու հնարաւորութիւնը: Պատասխանելով լրագրողների այն հարցին, թէ ինչ կը լինի, եթէ երկրի ղեկավարութիւնը բանակը ժողովրդի դէմ հանելու փորձ անի, նա նշեց, որ անձամբ ինքը նման հրամանի չի ենթարկուի:

«Բանակը ժողովրդին պաշտպանելու համար է: Բանակը ժողովրդինն է եւ ինչ-որ մէկի սեփականութիւնը չի, եւ ով ժողովրդի դէմ բանակ է հանում՝ ինքը ուրեմն մեր ազգից չի» - յայտարարեց ԵԿՄ նախագահը:

# ԼՈՒՐԵՐ

## ՀՅԴ-Ն ԻՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՕՇԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ«: Ինչպէս տեղեկացնում է Աթէնքի «Հայաստան» լրատուն, հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Դեկտեմբերի 10-ին Պէյրութում տեղի ունեցած հանրահաւաքի ընթացքում ծածանել է Հայաստանի պետական դրօշը: «ՀՅԴ-ի մասնաճիւղը Լիբանանում միանալով Լիբանանի վարչապետ Սինիորայի կառավարութեան դէմ Հըզբոլլա-Ամալ (իսլամ-շիիթական) շարժմանը, ծածանել է ՀՀ-ի դրօշը: Թէ Հայաստանի իշխանութեան պաշտօնական կեցուածքն է այս, որն արտայայտւում է կոալիցիա իրենց զինակիցի կողմից՝ չգիտենք, բայց հաստատ կարող ենք ասել որ այս քայլը ինչպէս է դիտուելու, այսօր Լիբանանում մեծամասնութիւն կազմող, 14 Մարտի կողմնակիցների կողմից, որ վայելում են ամբողջ արաբական աշխարհի զօրակցութիւնը», ասում է լրատուն:*

*Աթէնքի մեր գործընկերները ուշադրութիւն են հրաւիրում փաստին, որ յոյները Յունաստանի դրօշ չեն ծածանել Պէրութում, որ Հայաստանն այդպէս վարուելու որեւէ պատճառ չունի կողմնապահութիւն ցուցաբերել Լիբանանի քաղաքական ներքին հակամարտութեան մէջ, որը այս օրերին հասել է առճակատման եւ քաղաքացիական պատերազմի շեմին: Ընդ որում, «Հայաստան» լրատուն, անխոհեմ քայլից հեռնպահ մնալու համար կարեւոր է համարում հանգամանքը, «որ Դաշնակցութիւնը միաժամանակ ՀՀ Ազգային Ժողովի մաս կազմող կուսակցութիւն է, առաւել եւս ՀՀ իշխող կոալիցիայի մասնակից: Նկատի առնել, որ հայկական միւս կազմակերպութիւնները (ՌԱԿ, Հնչակեան եւ...) առաւել մօտ են Լիբանանի օրինական վարչապետ եւ Լիբանանի խորհրդարանում մեծամասնութիւն կազմող ճակատին: Առաւել նկատի առնելով, որ արաբական բոլոր երկրները (բացառութեամբ Սիրիայի) դէմ են դիրքաւորուած Հըզբոլլահի գլխաւորութեամբ Լիբանանի կառավարութեան դէմ ուղղուած շարժմանը»: Այդ ամէնով հանդերձ, «ՀՅԴ այստեղ ի՞նչ նպատակով է ծածանել ՀՀ դրօշը», հարցնում է Աթէնքի «Հայաստան» լրատուն:*

## ՍԻԼՎԱ ՅԱԿՈԲԵԱՆԸ՝ BBC-Ի NEXT BIG THING ՄՐՑՈՅԹԻ ՅԱՂԹՈՂ




*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: 17-ամեայ հայ երգչուհի Սիլվա Յակոբեանը դարձել է BBC-ի Next Big Thing հեղինակաւոր մրցոյթի յաղթող: I Like կատարումով, որի հեղինակը երգչուհու քոյրն է՝ Մանէն, Սիլվան կարողացել է առաջ անցնել մալաւացի ռեպեր Նիքից եւ բրիտանական Սթեֆան եւ Միա զոյգից:*

*Ժիւրիի անդամները յայտարարել են, որ հայ երգչուհին ի զօրու է գրաւել միջազգային բարձունքներ, իսկ նրա կատարած երգը որակել են որպէս «Թարմ եւ Նոր»:*

*Սիլվան «անհաւատալի» է անուանել իր աննախադէպ յաջողութիւնը: «Անչափ երջանիկ եմ, որ արժանացաւ նման պարգեւի» - նշել է նա:*

*Մրցոյթին մասնակցելու իրաւունք ունեն 18 տարին չլրացած կատարողները: Լաւագոյն 7 կատարողներին ընտրել է երաժշտական լրագրողներից եւ մասնագէտներից բաղկացած խումբը:*

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐՈՒ ՆՈՐ ԱՐՇԱՒ

*Շարունակուած էջ 1-էն*

*Ժիրայր Սէֆիլեանի եւ «Հայրենիք ու Պատիւ» կուսակցութեան անդամ Վարդան Մալխասեանի ձերբակալութիւնը:*

*«Մենք խստագոյնս դատապարտում ենք 20-րդ դարի 37 թուականը յիշեցնող նողկալի գործելաոճի ցանկացած դրսեւորում եւ պաշտօնապէս յայտարարում ենք, որ բոլոր քաղաքակիրթ ռեսուրսները վաղուց արդէն սպառած ապիկար իշխանութիւնները չեն կարողանալ իրենց համար ձեռնտու վախի մթնոլորտ արմատաւորել, այլ ընդհակառակը՝ կ՛արժանանան հասարակութեան արդար դատաստանին:*

*«Մենք պահանջում ենք անյապաղ ազատ արձակել Ժիրայր Սէֆիլեանին, Վարդան Մալխասեանին եւ նրանց զինակիցներին:*

*«Պահանջում ենք նաեւ ՀՀ քաղաքացիութիւն շնորհել իր գիտակցական ողջ կեանքը հայրենիքին անմնացորդ նուիրաբերած զաւակին՝ Ժիրայր Սէֆիլեանին՝ բացառելով նրա արտաքսումը Հայաստանից»,- ըսուած է ընդդիմադիր կուսակցութիւններու յայտարարութեան մէջ:*

*Յայտարարութեան տակ ստորագրած կուսակցութիւններու շարքին են Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Հնչակեան, «Նոր Ժամանակներ», «Հայրենիք ու Պատիւ», «Հանրապետութիւն», «Ժողովրդավարական Հայրենիք», Հայաստանի Ժողովրդական, Հայաստանի Դեմոկրատական, «Սահմանադրական Իրաւունք Միութիւն», «Օրինաց Երկիր», «Ազգային Ժողովրդավարների Միութիւն» եւ այլ կուսակցութիւններ:*

*Որոշ տեղեկութիւններու համաձայն իշխանութիւնները փորձած են Սէֆիլեանին արտաքսել դէպի Լիբանան, սակայն Երեւան-Պէյրութ թռիչները դադրած ըլլալով, չեն կարողացած այդ իրագործել:*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԱՅՏՆՈՒԵԼ Է ԱՅՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ, ՈՐՏԵՂ ԼՐԱԳՐՈՂ ԵՆ ԲԱՆՏԱՐԿԵԼ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Լրագրողների Պաշտպանութեան Կոմիտէ» միջազգային կազմակերպութիւնն այսօր հրապարակել է 24 երկրների ցանկը, որտեղ այս տարի լրագրողներ են բանտարկուել: Ցուցակում տեղ է գտել նաեւ Հայաստանը:*

*Կազմակերպութիւնը տեղեկացնում է, որ Յունիսի 26-ին ազատազրկման է դատապարտուել «Ժամանակ - Երեւան» թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանը:*

*«Գլխաւոր դատախազութիւնը Բաբաջանեանին հարցաքննութեան էր հրաւիրել ենթադրաբար որպէս վկայ մի քրէական գործով: Փոխարէնը իշխանութիւնները մեղադրել էին նրան 2002 թուականին զինուորական ծառայութիւնից խուսափելու նպատակով փաստաթղթերը կեղծելու մէջ եւ ձերբակալել: Դատավարութեան ժամանակ նա իրեն մեղաւոր էր ճանաչել փաստաթղթերը կեղծելու մէջ, սակայն պնդել էր, որ իրեն ներկայացուած մեղադրանքը վրէժխնդրութիւն է թերթում տպագրուած քննադատական նիւթերի համար», - ասուած է Նիւ Եորքում գտնուող «Լրագրողների Պաշտպանութեան Կոմիտէ»-ի զեկոյցի մէջ:*

*Փաստաթղթի հեղինակները նշում են, որ Բաբաջանեանի ձերբակալութեան նախօրէին «Ժամանակ - Երեւան»-ը յօդուած էր տպագրել, որտեղ հարցականի տակ էր դրել գլխաւոր դատախազութեան անկախութիւնը:*

*Միջազգային կազմակերպութեան զեկոյցում նշւում է, որ այս տարի աշխարհում բանտարկուել են ռեկորդային թուով լրագրողներ՝ 134, ինչը 9-ով աւելի է, քան անցած տարի: Լրագրողներ են ազատազրկուել Ադրբեջանում, Ռուսաստանում, Միացեալ Նահանգներում, Թուրքիայում, Իրանում եւ այլ երկրներում:*

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՑՈՅՑԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*րութի որոշ թաղամասերուն մէջ Սուննի եւ Շիի քաղաքացիներու միջեւ տեղի ունեցած բախումներու ընթացքին:*

*Լիբանանահայութիւնը անմասն չմնալով այս բոլոր գործընթացներէն, ինք եւս բաժանուած է երկու խմբաւորումներու: Դաշնակցութիւնը իր մասնակցութիւնը կը բերէ ընդդիմադրութեան ցոյցերուն, իսկ Հնչակեան եւ Ռամկավար կուսակցութիւնները կը զօրակցին Սինիորայի կառավարութեան:*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կազմակերպութեամբ Ուրբաթ, Դեկտեմբեր 8-ի երեկոյան Պէյրութի հայկական թաղամասերուն մէջ տեղի ունեցաւ ժողովրդային ցոյց՝ ի պաշտպանութիւն Լիբանանի օրինաւոր կառավարութեան:*



Կուսակցութեան կեդրոնին առջեւ ելոյթ կ'ունենայ Հնչակեան ներկայացուցիչը

*ՀՄՄ-ի փողերախումբի առաջնորդութեամբ ցուցարարները համախմբուեցան Հնչակեան Կուսակցութեան կեդրոնատեղիին առջեւ, ուր փողերախումբը հնչեցուց Լիբանանի քայլերգն ու հայրենասիրական երգեր: Ելոյթ ունեցողները վեր առին վարչապետ Սինիորայի կառավարութեան դերակատարութիւնը Իսրայէլեան բանակը դուրս բերելու, պատերազմի պատճառած աւերը վերացնելու եւ երկրի անկախութիւնը պաշտպանելու ուղղութեամբ:*

*Յաջորդ օրը, Դեկտեմբեր 9-ին շուրջ հազար հոգինոց Հնչակեան պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին նաեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ներկայացուցիչները ուղղուեցան Պէյրութի կեդրոնը գտնուող Կառավարութեան Պալատը: Վարչապետարանի հսկայ սրահէն ներս հայկական պատուիրակութեան հետ հանդիպում ունեցան Վարչապետ Ֆուատ Սինիորա, նախարար Ժան Օղասապեան եւ Խորհրդարանի անդամ Սերժ Թուրսարգիսեան:*

*Պատուիրակութեան անունով ելոյթ ունեցաւ Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Տօքթ. Մացակ Փոլատեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ թէ, Հնչակեան Կուսակցութիւնը նեցուկ է վարչապետ Սինիորային ու անոր գլխաւորած կառավարութիւնը նկատեց հարիւր առ հարիւր օրինաւոր եւ օրինակելի:*

*Հայկական պատուիրակութեան առջեւ ելոյթ ունենալով վարչապետ Սինիորա անդրադարձաւ երկրէն ներս տեղի ունեցող զարգացումներուն, պատասխանելով իր հասցէին ընդդիմադրութեան կողմէ կատարուող ամբաստանութիւններուն:*

*Լիբանանեան հեռատեսիլի ալիքները, ինչպէս նաեւ թերթերը լայնօրէն անդրադարձան Հնչակեան Կուսակցութեան կողմէ կատարուած ցոյցերուն:*

## ՀԱՅԱՍՏԱՆ

# Ս.Դ.Հ.Կ.-Ի «ՏԽՐՈՒՆԻ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՊԱԳԱ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ

Վերջերս Երեւանի մէջ սկսած է լոյս տեսնել Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Սարգիս Տխրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութեան «Ապագա» ուսանողական երկշաբաթաթերթը, որ ընդհանրապէս կը տարածուի համալսարաններէ ներս:

Թերթին մէջ տեղ կը գտնեն նիւթեր, նուիրուած երիտասարդական եւ ուսանողական հարցերու, Միութեան գործունէութեան, ինչպէս նաեւ Հնչակեան Կուսակցութեան պատմութեան:

Ստորեւ, կը հրատարակենք «Ապագա»-ի երկրորդ համարի առաջնորդող յօդուածը:

ԽՄԲ.

## ՈՒԶՈՒՄ ԵՆ ՊԱՐԶԵԼ ԲՈՒՀԵՐԻ ԿՈՌՈՒՄՊԱՑՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Սարգիս Տխրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութիւնը հանդէս է եկել յայտարարութեամբ, որում յայտնում է, թէ մայրաքաղաքի բոլոր պետական բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում նախաձեռնում է անցկացնել բուհերի կոռումպացուածութեան մակարդակը ճշդել ցանկացող սոցիոլոգիական հարցում: Նախատեսւում է հարցումներ կազմակերպել շուրջ 2000 ուսանողների շրջանում: Այս առիթով մեր միութիւնը կոչ է անում գործող բոլոր ուսանողական խորհուրդներին համագործակցել մեզ հետ եւ համատեղ ստեղծուած յանձնախմբերի միջոցով պայքարել կրթական ոլորտում տիրող համատարած կոռուպցիայի դէմ: Այս կերպ ուսանողական խորհուրդները նաեւ կ՚ապացուցեն, որ իրենց նպատակն իսկապէս ուսանողների շահերի համար պայքարելն է այլ ոչ թէ բուհական ադմինիստրացիայի կամակատար հանդիսանալը: Հարցումները սկսելու են սոյն ամսի 11-ից:*

## ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ...


ԱՊԱԳԱ
Ուսանողական Երկշաբաթաթերթ
Դեկտեմբերի 7 /հինգշաբթի/ 2006թ.

Շարունակելով քննարկումները...

Ռուզան Հարությունյան

Այս Համարում՝

Ինքներս կերտենք մեր ապագան. Համդիպում չնորհալի երեխաների հետ... էջ 2

Գնահատենք մեր արժեքները. Հայը պետք է ապրի իր հայրենիքում ... էջ 3

Ուսանողական կենսաձև. Պաշտպանենք ուսանողներին՝ նրանց ծեծելով ... էջ 4

Ոսկյա երիտասարդը «Դորոջարավոր» տղայի ընկերուհին. մաս երկրորդ... էջ 5

Հայրենիք իմ անգին Հայաստանը երեկ, այսօր և վաղը ... էջ 6

Մեր մեծերը Լեգենդ Զորավարի մասին... էջ 7

Այլ... Հայտարարություններ, հումոր ...էջ 8

***ՌՈՒԶԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ***

*Ս.Դ.Հ.Կ. «Սարգիս Տխրունի» Երիտասարդական-Ուսանողական միութիւնը շարունակում է ամէն շաբաթ կազմակերպուող քննարկումների շարքը: Բուռն քննարկումների արդիւնքում ծնուած ճշմարտութիւնը երբեք չի մոռացւում: Ահա առաջնորդուելով այս բանաձեւով՝ նպատակ ունենք բարձրացնել հայ մարդու ինքնագիտակցութիւնն ու ինքնագնահատումը, փորձում ենք երիտասարդների մէջ սերմանել սեփական արժէքներն ու հայրենիքն ամէնից վեր դասելը:*

*Հերթական քննարկման թեման էր «Վան գործողութիւնն ու դրա հետեւանքները», մեր հիւրն ու բանախօսն էր կենդանի լեգենդ, «Ասալա» հայկական գաղտնի բանակի անդամ, «Վան» գործողութեան ղեկավար, նախկին քաղբանտարկեալ Վազգէն Սիսլեանը: Խօսում էինք «Վան» գործողութեան նախապատրաստական աշխատանքների, ընթացքի եւ հետեւանքների մասին: 1981 Թուականի Սեպտեմբերի 24ին հայ հայրենասէր ու ազգանուէր գործիչներ Վազգէն Սիսլեանը (Ս.Դ.Հ.Կ.) Գէորգ Գիւզալեանը (Մեծն Մուրադ), Արամ Բասմաճեան (ՀՅԴ), Յակոբ Ջուլֆայեան (ՌԱԿ), մտնելով Ֆրանսայում Թրքական հիւպատոսարան վերցրել էին 59 պատանդ ու ներկայացրել արդարացի պահանջներ, որտեղ պաշտպանւում էին ոչ միայն հայերի, այլ նաեւ անարդարացի կերպով բանտարկուած, ազգութեամբ քիւրտ եւ Թուրք քաղբանտարկեալների իրաւունքները: «Մենք գիտէինք, թէ ինչ քայլի ենք գնում ու ինչ հետեւանքներ կ՚ունենար դա, ինչ էր մեզ սպասւում այդ ամէնից յետոյ: Բայց մենք նաեւ գիտակցում էինք, որ այն ամէնը, ինչ որ մենք անում էինք, անում էինք յանուն հայրենիքի, յանուն մեր ազգի, մի ազգի, որը բազմիցս պատմական անարդարութեան զոհը դառնալով՝ շարունակում էր իր գոյութիւնը: Ցանկացած պահի պատրաստ էինք պայթեցնել հիւպատոսարանը, այդ պահին, սակայն աւելի շատ մտածում էինք ոչ թէ մեր մասին՝ որոշուած էր գնալ մինչեւ վերջ՝ յանուն հայրենիքի, այլ մտածում էինք այն 59 պատանդների մասին, որ մեզ մօտ էին»: Վազգէն Սիսլեանը վկայում է նաեւ, որ ֆրանսացիները ողջունում էին հայերի այս քայլը՝ ասելով, որ յանուն Ֆրանսայի իրենք կ՚անէին նոյնը»:*

*Հիւրը ողջունեց Հնչակեան «Սարգիս Տխրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութեանը՝ այս քննարկումների շարքը կազմակերպելու համար, ինչպէս նաեւ յաւելեց, որ ուրախ է այն փաստի կապակցութեամբ, որ աշխարհի հնչակեանութեան շրջանում մեծ դերակատարութիւն ունեցող տխրունիական շարժումը վերջապէս նաեւ արմատներ է գցում Մայր Հայրենիքում:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year) * $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ------------------------------------------**
**Address: ---------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: -------------**
**Tel :------------------------ Fax : ------------------------**



ՔԱՂԱՔԱԿԱՆ

# ԻՐԱՔԵԱՆ ՏԱԳՆԱՊԻ «79» ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*

*Մեր նախորդ յօդուածներէն մէկուն մէջ անդրադարձած էինք Ամերիկայի շուարած վիճակի մասին՝ Իրաքեան տագնապի լուծման վերաբերեալ: Այդ շուարումէն դուրս ելլելու համար Նախագահ Պուշի իշխանութիւնը, որ մինչ այդ կը պնդէր «ընթացքը շարունակելու» մասին, մինչեւ յաղթանակ, ինքզինք գտաւ նոր պարտադրանքներու առջեւ յատկապէս Նոյեմբեր 7ի ընտրութիւններէն ետք, երբ ամերիկացի ընտրողները յստակօրէն պահանջեցին «ընթացքը փոխելու» անհրաժեշտութիւնը, որ կը նշանակէր նաեւ Պուշի իշխանութեան, այսինքն հանրապետական կուսակցութեան ձախողութիւնը, եւ անոր փոխարինումը, ընդդիմադիր տեմոքրաթ կուսակցութեան կողմէ: Այլեւս, ոչ միայն ծիծաղելի էր «ընթացքը շարունակելու» քաղաքականութիւնը, այլ նաեւ վտանգաւոր եւ պարտութեան առաջնորդող: Պուշ ապուշ պէտք է ըլլար եղած պահանջը անտեսելու, եւ անտեսելու փոփոխութեան տրամադրութիւնը, յատկապէս տեմոքրաթներու եւ ամերիկեան հանրային կարծիքի կողմէ: Ուրեմն, առանց ժամանակ կորսնցնելու, Պուշ կը ճամբէր իրաքեան պատերազմի իր ամենէն աչքառու կերտիչներէն եւ կողմնակիցներէն մէկը, պատերազմական նախարար Տանըլտ Ռազմֆիլտը, զայն փոխարինելով նոր նախարարով մը որ Ռոպըրթ Կէյթս կը կոչուի: Միեւնոյն ատեն, արդէն կար նշանակուած յատուկ յանձնախումբ մը, կազմուած միջ-կուսակցական, հինգ հանրապետական եւ հինգ տեմոքրաթ, աչքառու նախկին քաղաքական գործիչներէ, որոնք շաբաթներու վրայ խորհրդակցութենէ ետք, Պուշին պիտի ներկանային նոր առաջարկներով, իրաքեան տագնապի լուծման համար: Այս յանձնախումբը կը ղեկավարէին նախկին արտաքին նախարար Ճէյմս Պէյքըր 3րդ, հանրապետական, եւ նախկին սենաթըր, Լի Հեմիլթըն: Ի նպաստ այս յանձնախումբին, ըսուեցաւ որ Ամերիկայի զոյգ կուսակցութիւնները, հարկ եղած ատեն, կրնային գործակցիլ երկրի ընդհանուր շահերուն համար: Տոնըլտ Ռազմֆելտի ճամբուիլը եւ այս յանձնախումբի նշանակումը լաւ աչքով դիտուեցաւ բոլորին կողմէ:*

### *Ի՞ՆՉ ԸՐԱՒ ԱՅՍ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ*

*Նոյեմբեր 7ի ընտրութիւններէն քանի մը շաբաթներ ետք, յանձնախումբը Նախագահին եւ երկրին ներկայացաւ 79 առաջարկներէ բաղկացած թղթածրարով մը, որ ըստ իրենց, կարելի պիտի դարձնէր իրաքեան պատերազմի ցարդ գործադրուած քաղաքականութեան փոփոխութիւնը եւ վերանայումը: Ամերիկան յետ այսու պէտք է որդեգրէր նոր քաղաքականութիւն: Ներկայիս, ամբողջ Ամերիկան, այլ նաեւ Իրաքի շրջանակները կը զբաղին յանձնախումբի առաջարկներով, ոմանք զանոնք օգտակար եւ շինիչ նկատելով, իսկ ուրիշներ վտանգաւոր եւ ծիծաղելի: Իսկ պետութեան լրատուական բոլոր ցանցերը հեռատեսիլ, ռատիօ, եւայլն օրն ի բուն լծուած են այդ առաջարկներու վերլուծումով եւ քննարկումով: «Fox», «NBC», «CBS», «Face the nation», «Meet the Press», «CNN» եւ ուրիշներ, երկար հարցազրոյցներ կ՚ունենան յանձնախումբի անդամներուն հետ, յատկապէս Պէյքըրի եւ Հեմիլթընի: Ի հարկէ դժուար է մանրամասնօրէն անդրադառնալ այդ 79 առաջարկներու մասին: Հոս կ՚ուզենք վեր առնել հիմնական եւ գլխաւոր առաջարկները:*

### *ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՆՈՆՔ*

*Առաջին – կարելի չէ իրաքեան պատերազմը շահիլ պատերազմական միջոցներով: Պէյքըր եւ իր կողմնակիցները կը խոստովանին որ իրաքեան պատերազմը կարելի է շահիլ ոչ թէ պատերազմի, այլ քաղաքական միջոցներով: Այս կը նշանակէ.*

*1. Շրջանային աւելի առողջ, կորովի (robust) դիւանագիտութիւն: Ի՞նչ պէտք է հասկնալ այս արտայայտութեամբ: Ամերիկան այժմ պէտք է փոխէ կամ վերանայի ցարդ իր հետեւած քաղաքականութեան ընթացքը, թէ իրաքեան եւ թէ շրջանային թատերաբեմերու վրայ: Իրաքեան ճակատի վրայ հարկաւոր է քաղաքական հաշտութիւն յառաջացնել երկրի պատերազմող հատուածներու միջեւ: Այս կը նշանակէ Շիիներու, Սիւննիներու, Քիւրտերու եւ անոնց ենթակայ աղանդաւոր փոքր բանակներու միջեւ քաղաքական հաշտութիւն յառաջացնել: Անոնք որոնք տեղեակ են այս աղանդաւոր խումբերու ոչ միայն ներկայի, այլ դարերու ընթացքին եղած հակամարտութեանց, կրնան պատկերացնել թէ որքա՜ն դժուար առաքելութիւն մըն է այս: Դարերէ ի վեր, անոնք իրարու դէմ կռուած են, եւ հրաշքով մը, այսօր իրարու հետ պիտի կարողանան քաղաքական հաշտութիւն մը հաստատել: Անոնք այսօր ոչ միայն կը կռուին իրարու դէմ, այլ մանաւանդ կը կռուին Ամերիկայի դէմ, որուն բանակները արդէն իսկ կը նկատուին թշնամի, եւ Իրաքը գրաւող եւ ոչ թէ փրկող ներկայութիւն: Այս իմաստով Իրա-*



*Յանձնախումբի ղեկավարներ Լի Հեմիլթըն եւ Ճէյմս Պէյքըր 3րդ*

*Շար.ը էջ 17*



**ԱԶԳԱՅԻՆ**

# ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՍՐԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

## Գործնական Նախագիծ

*ԴՈԿՏ. Տ. ԶԱՒԷՆ ԱՒ. ՔՀՆՑ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*

**Ներկայ գրութիւնը Թեմիս Առաջնորդ Սրբազան Տ. Յովնան Արքեպիսկոպոս անձամբ ներկայացուցած է Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետին, որուն անունով ստացանք հետեւեալ Դեկտ. 5, 2006 թուակիր նամակը:**

***

«Արժանապատիւ եւ Սիրելի Տէր Հայր,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացուել է ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի Նոյեմ. 14 թուակիր գրութիւնը եւ կից ուղարկուած Ձեր կազմած «Ապրիլեան եղեռնի նահատակների սրբացման հարցը» խորագրով նախագիծը: Փոխանցում ենք Ձեզ Վեհափառ Հայրապետի գնահատանքն ու օրհնութիւնը՝ կատարուած ջանադիր ուսումնասիրութեան համար: Տեղեկացնում ենք որ Նորին Սրբութեան յանձնարարութեամբ, ներկայացուած նախագիծը փոխանցուել է Սրբադասման յանձնաժողովի նախագահ Տ. Եզնիկ Արք. Պետրոսեանին:

Օրհնութեամբ՝ Արշակ Եպս. Խաչատրեան, Դիւանապետ»

***

*Հայոց ցեղասպանութեան հետեւանքով միլիոնաւոր հայ նահատակներու սրբացման խնդիրը, որ վերջերս աւելի հետաքրքրութիւն եւ կարեւորութիւն ստացաւ, կը մնայ տակաւին անորոշ, տարբեր տուեալներու եւ կարծիքներու անյարիր մօտեցումներու հետեւանքով: Մօտ վեց հարիւր տարիներ արդէն անցեր են ու Հայաստանեայց Եկեղեցին սուրբ մը նոյնիսկ չէ կանոնացուցած: Վերջին սուրբը Հայ Եկեղեցւոյ եղաւ Ս. Գրիգոր Տաթեւացին:*

*Արդարեւ, սրբացման համար կենսական պայմաններ յառաջ կը քշուին, ինչպէս հին ժամանակներու Քրիստոսի վկաները որոնք չարչարանքի տակ իրենց կեանքը կնքեցին այլեւայլ պարագաներու ներքեւ: Անոնց կարգին Հայաստանի առաջին սուրբերն եղան, շատերու կարգին, Սանդուխտ Կոյս, Ոսկեանք եւ Սուքիասեանք: Նաեւ, չնահատակուելու պարագային, բնական մահուամբ իրենց կեանքը կնքողներէն կը սպասուէր խստակրօն կենցաղ եւ քրիստոսանման կեանք, որոնց վրայ նաեւ հարկ կը տեսնուէր առ նուազն երկու հրաշքներու կատարումը տուեալ թեկնածուներու կեանքի ընթացքին, իրագործուած իրենց ձեռքով, յարատեւ աղօթելով, սրբակեաց խստակրօն կեանք մը ապրած ըլլալով, եւ կամ բացառիկ ու յարատեւ բարեգործութիւններ ու բարեկարգութիւններ կատարած ըլլալով:*

*Վերջիններու կարգին կը պատկանին Հայ Եկեղեցւոյ եւ հայ քրիստոնէութեան հիմնադիրները՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Ներսէս Պարթեւ Մեծ Հայրապետ, Ս. Սահակ Պարթեւ Հայրապետ, Ս. Մեսրոպ Մաշտոց Վարդապետ, Ս. Յովհաննէս Մանդակունի, Օձնեցի Հայրապետ, եւ աւելի ուշ, Ս. Գրիգոր Նարեկացի եւ Ս. Ներսէս Շնորհալի, յիշած ըլլալու համար միայն գլխաւորները:*

*Ճիշդ է այս նախապայմանը եթէ սրբացուողը մէկ անձ մըն է որուն մասին իր մահուընէն տարիներ ետք Եկեղեցին կը վերաքննէ իր անցեալի կեանքն ու խստակրօն արարքները ու կը յանգի մէկ կամ միւս եզրակացութեան: Սակայն պարագան տարբեր կ'ըլլայ երբ խմբական, եւ այս պարագային Ապրիլեան միլիոնաւոր հայ նահատակներու կը վերաբերի հարցը:*

*Կայ արդարացուցիչ սա պարագան եւս, թէ Ապրիլեան Եղեռնի բազմահազար հայ նահատակներուն մէջ կային անպայման շատեր որոնք թերեւս չէին հաւատար նոյնիսկ Քրիստոսի, ու հաւանաբար ապրած են անաստուած եւ անբարոյ կեանք մը, եւ այդու իսկ բնականօրէն խմբական սրբացման չեն կրնար արժանանալ: Այդուհանդերձ, նման արգելք մը պիտի չկարենար պատճառ դառնալու հարիւր հազարներու, այլապէս ընտիր հայորդիներու, որոնք ընդհակառակը արժանի պիտի լինէին սրբանալու իրենց քրիստոնէական կրօնքին համար, իրենց կեանքը զոհելով նոյնիսկ պաշտօնի վրայ իբրեւ հոգեւորականներ եւ մտաւորականներ, ուսուցիչներ, բարեպաշտ ծնողներ եւ աշակերտներ, որոնք անագորոյն ու գազանային արհաւիրքներու տակ սպաննուեցան ու մնացին անգերեզման:*

*Խմբական սուրբեր շատ յիշուած են Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցին մէջ, ուր մի քանի անուններով յիշուած սուրբերու շարքին անանուն սուրբեր ալ խմբովին կը յիշուին որպէս աշակերտները կամ հետեւորդները՝ «եւ այլոց աշակերտացն», «եւ այլոց սրբոց հարցն», «եւ որոց ընդ նմա կատարեցան» բացայայտ յաւելումներով: Չյիշուածները նոյնքան պատուաւոր սուրբեր են, ոչ իսկ դոյզն տարբերութեամբ: Ակնբախ օրինակներ շատ կան այս ուղղութեամբ:*

*2006 թուի Փետրուար 23-ի Վարդանանց Զօրավարաց յիշատակութեան կից կը կարդանք «հազար երեսուն եւ վեց վկայիցն որք կատարեցան մեծի պատերազմին»: Նոյեմբեր 28ի Երեքշաբթի օրուան յիշատակելի սուրբերը կը բնորոշուին հետեւեալ կերպով. «Սրբոցն Ղուկիանոսի քահանային, Տարագրոսի, Պրոբոսի, Անդրոնիկոսի եւ Ոնեսիմեայ, եւ այլոց աշակերտացն սրբոյն Պօղոսի»: Նոյն տարւոյ Դեկտեմբեր 7ի Հինգշաբթի օրուան յիշատակելի սուրբերը նշուած են իբրեւ «Սրբոց հարցն Եգիպտացւոց՝ Պօղոսի, Մակարայ, Եւագրի, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի, եւ այլոց սրբոց հարցն»: Օգոստոս 1ի Երեքշաբթի օրուան յատուկ սուրբերն են «Աթանագինէ եպիսկոպոսն եւ տասն աշակերտքն եւ հինգ վկայքն», եւ կամ Հոկտեմբեր 30ի Երկուշաբթիի յատուկ են «Սուրբք Անաստաս քահանայ, Վարոս եւ Թէոդիտոս, եւ որդիք նորա եւ որք ընդ նմա կատարեցան»:*

*Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցին մէջ նման բովանդակութեամբ բազում այլ անանուն յիշատակելի սուրբեր դարերէ ի վեր կը յիշատակուին, յանուանէ կամ ոչ, բոլորն ալ կանոնականացուած սուրբեր հաւասարապէս: Յատկապէս նշանակելի է այն պարագան երբ կը կարդանք մնացեալներու մասին, «որք կատարեցան մեծի պատերազմին», «որք ընդ նմա կատարեցան», այսինքն «անոնք որոնք անոր հետ նահատակուեցան», ուրկէ կարելի չէ ստուգել թէ վերջիններէն ոմանք արժանաւորնե՞ր էին թէ ոչ: Իրենց նահատակուիլն իսկ բաւական նկատուած է միանալու առաջիններուն: Սա պարագան որքան կը պատշաճի Ապրիլեան Նահատակներու սրբացման ուղղութեամբ:*

*Ապրիլեան Եղեռնի խմբական սրբացումի կնճռոտ կարծուած խնդիրը մեր կարծիքով կարելի է լուծել հետեւելով վերոյիշեալ օրինակներու ընծայած տարազին: Նախ յիշատակելով հայոց ցեղասպանութեան ուղղակի թիրախ դարձած Արմաշու Դպրեվանքը, որ առաջաւոր միակ կրօնական հաստատութիւնն էր Թուրքիոյ մէջ, օճախը Քրիստոսի Եկեղեցիին ու անոր առաքելութեան, եւ ապա անկէ սնած ու պաշտօնի անցած հոյլ մը հոգեւորականներ, որոնք յանուանէ բնորոշուած են որպէս ուղղակիօրէն սպաննուած անձինք իրենց գործին հազիւ ձեռնարկած, պաշտօնի վրայ, երբ թուրքեր խուժած են Դպրեվանքն ու թեմերու հայ եկեղեցիները, քանդած սրբավայրերը, ձերբակալած են եպիսկոպոսները, վարդապետներն ու քահանաները, եւ իսկոյն նահատակած:*

*Որքան ատեն որ գիտենք անունով եւ մականունով սպաննուած հայ հոգեւորականները, իրենց ճշգրիտ կենսագրութիւններովն ու նոյնիսկ լուսանկարներով, ինչպիսին եղան Սմբատ եպիսկոպոս Սաատէթեան Կարնոյ Առաջնորդը, Խոսրով եպիսկոպոս Պեհրիկեան Կեսարիոյ Առաջնորդը, Սահակ վարդապետ Օտապաշեանն ու Պսակ Ծ. վարդապետ Տէր Խորէնեանը, եւ այլք, որոնց ցանկը կու տանք ստորեւ, կարելի պիտի ըլլայ, նման Տօնացոյցին մէջ դարերու խորքէն եկած խմբական յիշատակութեանց, բոլորն ալ սուրբեր հռչակուած, նոյնպէս կարելի պէտք է ըլլայ Եղեռնի հարիւրամեակը չհասած սրբացնել Ապրիլեան Հայ Նահատակները խմբովին, օգտագործելով նոյն եզրաբանութիւնը, ճշդելէ ետք նահատակեալ հայ հոգեւորականներու անուններն ու մարտիրոսացումը՝ թուականով, վայրով եւ մահացու հարուածներով:*

*Կը ստացուի մօտաւորապէս հետեւեալ պատկերը:*

*«Յիշատակ Նահատակացն հայոց 1915 ամի, սրբոցն (տալ բոլոր ստորեւ ճշդուած Նահատակ հոգեւորականներու անունները, ներառեալ «կենդանի Նահատակ» մեծն Կոմիտաս վարդապետի), եւ բիւրաւոր այլոց սրբոց Նահատակացն ազգիս հայոց, արանց, կանանց, երախայից, եւ որոց ընդ նոցին ի Քրիստոս կատարեցան յընթացս ցեղասպանութեան հայոց»:*

*Հարցը պարզացնել, առանց այլեւս զայն յաւելեալ ու անհարկի ուսումնասիրութեան ենթարկելու, պիտի դիւրացնէր կանոնականացման հարցը: Անշուշտ Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան կը մնայ հետեւողական կերպով զարգացնել ներկայացուած սոյն նախագիծը, նախապատուութիւն տալով անոր, որպէսզի Մեծ Եղեռնի հարիւրամեակէն առաջ սրբացուէին մեր Ապրիլեան Նահատակները ամփոփ եւ ընդունելի տարազի մը ներքեւ, ինչպէս կատարած են մեր նախնիք նոյնքան պարզութեամբ:*

*Նահատակ Հոգեւորականներու Անունները*

*«Եպիսկոպոսացն Խոսրովու Կեսարիոյ*

*Սմբատայ Կարնոյ*
*Ներսէսի Ատանայի*
*Խորէնայ Կիւրինի*
*Յակոբ-Աշոտի Եգիպտոսի*
*Եզնկայ Բալուի*
*եւ*

*Վարդպետացն Կոմիտասայ Երաժիշտի*

*Մկրտչի Տիգրանակերտի*
*Սահակայ Երզնկայի*
*Արտաւազդայ Եդեսիոյ*
*Պարգեւի Պրուսայի*
*Պսակայ Խարբերդի*
*Շաւարշայ Եւդոկիոյ*
*Սուրէնի Բաղիշոյ*
*Գեղամայ Քղիի*
*Համազասպայ Սամսոնի*
*Գէորգայ Տրապիզոնի*
*Վարդանայ Մշոյ*
*Անանիայի Բաբերդի*

*եւ այլոց վարդապետաց, քահանայից, հոգեւոր հարց*

*Կաթողիկէ եւ Աւետարանական Եկեղեցեաց Հայոց*

*եւ*

*Համօրէն աշխարհական գլխաւորաց եւ բիւրաւոր մանկանց, արանց, կանանց եւ երախայից եւ որոց ընդ նոցին կատարեցան յԱնուն Քրիստոսի յընթացս ցեղասպանութեան հայոց»*

*Հակիրճ կենսագրականներ վերեւ Յիշուած Նահատակներուն*

### *ԽՈՍՐՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԷՀՐԻԿԵԱՆ*

*Արմաշական, Առաջնորդ Կեսարիոյ թեմին, 1914 թուին եպիսկոպոս ձեռնադրուած Գէորգ Ե. Կաթողիկոսէն, ու Էջմիածնէն վերադարձին ամբաստանուած թշնամի երկրէ գրգռութիւն բերած ըլլալու յանցանքով: Բանտարկուած եւ դէպի Տիարպեքիր աքսորի ճամբուն վրայ նահատակուած թուրք ոստիկաններու ձեռքով 46 տարեկանին:*

### *ՍՄԲԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԱՏԷԹԵԱՆ*

*Արմաշական, օծակից Խոսրովի, եպիսկոպոսացած 1910ին Մատթէոս Բ. Կաթողիկոսէն: 1915 Յունիս 15ին Կարնոյ կառավարիչին ներկայանալու կանչուած՝ առանց գիտնալու թէ ինչ էր ստոյգ պատճառը: Ամբաստանուած իբրեւ թէ Երզնկայի առաջնորդարանին տեղեկութիւն հասցուցած էր «փութացնելու զէնքերն ու կապարները»: Բացայայտ այդ սուտէն անմիջապէս ետք Սմբատ Եպս. Երզնկայ տարուած է եւ հոն Մահմուտ կառավարիչի հրամանով նահատակուած 44 տարեկանին: Իր հետ նահատակուած են նաեւ վեց քահանայ հայրեր որոնք յանուանէ յիշուած են:*

### *ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՆԻԷԼԵԱՆ*

*Սիսի Կիլիկիոյ Աթոռին միաբան, կը նահատակուէր 47 տարեկանին, ամբաստանուելով որպէս ապստամբութեան ղեկավար. կը բանտարկուէր Հալէպի մէջ, Դամասկոս կը տարուէր, ապա՝ Կ. Պոլիս Օրմանեան պատրիարքի երաշխաւորութեամբ: 1911-ին եպիսկոպոս կը ձեռնադրուէր Սահակ Խապայեան Կիլիկիոյ կաթողիկոսէն որպէս թեմակալ Ատանայի: 1914-ին Եոզղաթի առաջնորդ կ'ընտրուէր, ըլլալով նաեւ գրագէտ եկեղեցական «Սսական Վարդապետ» ծածկանունով: 1919 թուին կը ձերբակալուէր 500 հայ մտաւորականներու եւ վաճառականներու հետ: Բոլորը միասին կ'աքսորուէին Սեբաստիա՝ Եոզղաթի կուսակալ Ճեմալի հրամանով, եւ ականատես վկաներու համաձայն, կը սպաննուէին Սեբաստիոյ մօտ՝ Գարտաշլարի ձորերուն մէջ՝ Թաշլըտեբէ կոչուած տեղը:*

### *ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԻՄԱՔՍԵԱՆ*

*Ծնած Կիւրին 1864-ին եւ եղած միաբան Սիսի Կիլիկիոյ կաթողիկո-*

*Շար.ը էջ 19*

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ 141-ՐԴ ԹՌԻՉՔԸ $5.7 ՄԻԼԻՈՆԻ ՆՊԱՍՏ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Միացեալ Հայկական ֆոնտի 141րդ թռիչքը Երեւան հասաւ Դեկտեմբեր 9ին, փոխադրելով $5.7 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն:

Այս թռիչքով, Միացեալ Հայկական Ֆոնտը իր կողմէ տրամադրեց $4.7 միլիոն արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, որոնց մեծամասնութիւնը նուիրած էին AmeriCares կազմակերպութիւնը ($4.6 միլիոն արժողութեամբ), Գանատայէն Health Partners International կազմակերպութիւնը ($64,000), Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան Վարչութիւնը ($14,000), եւ MAP International կազմակերպութիւնը ($10,000):

Հետեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս ապրանքներ նուիրելով մասնակցեցան այս թռիչքին - Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը ($300,000 արժողութեամբ), Pfizer, Inc. ընկերութիւնը ($200,000), Բժ. Սթիվըն Քաշեան ($69,000), Հայ Աւետարանական Առաքելութիւնը ($69,000), Յարութ Շանթիկեան ($51,000), Նորք Մարաշ բժշկական կեդրոնը ($46,000) եւ Հայկական Օգնութեան Ֆոնտը ($46,000):

Թռիչքին մասնակցեցան նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը ($44,000), Հայաստանի Ամերիկեան Համալսարանը ($33,000), Մեծն Բրիտանիայէն Birthlink կազմակերպութիւնը ($28,000), Հայ Որբերու Օգնութեան Միութիւնը ($26,000), Բժ. Սամուէլ Մալայեան ($19,000), եւ Հայ Օգնութեան Միութեան Անի Մասնաճիւղը ($13,000):

1989էն ի վեր, Միացեալ Հայկական ֆոնտը 141 թռիչքներով եւ 1,392 ծովային արկղներով $456 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:

Յաւելեալ տեղեկութեան համար կը խնդրուի դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 3015 Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:

# ՇՈՒՇԱՆԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ

ՍՈՆԻԱ ՄԿՐԵԱՆ

Նոյեմբերի 9ի երեկոյեան Կլէնտէյլի գրադարանում բացառիկ յաջողութեամբ կայացաւ տաղանդաւոր դաշնակահարուհի, միջազգային մրցոյթին դափնեկիր Շուշանիկ Յովակիմեանի մենահամերգը:

Այս էլ երրորդ անգամը լինելով, այն հովանաւորուած էր Համազգայինի Երաժշտական միաւորի կողմից:

Շուշանիկը իր առաջին համերգը տուել է տասներեք տարեկան հասակում: Այնուհետեւ նա մասնակցել է բազմաթիւ մրցոյթների՝ շահելով մրցանակներ: Նա համերգներով շրջագայել է Աւստրիա, Իտալիա, Գերմանիա, Փարիզ, Գալիֆորնիա: Ներկայիս Շուշանիկը աշակերտում է մեծահամբաւ դաշնակահար Արմէն Բաբախանեանին:

Դահլիճը լեցուն էր երաժշտասէր հասարակութեամբ եւ բվվում էր մեղուափեթակի նման: Յանկարծ լռութիւն տիրեց: Բեմահարթակի ետեւից յայտնուեց անպաճոյճ հայուհին, գեղեցիկ ու բարակիրան. առաջացաւ, խոնարհութիւն արեց եւ տեղաւորուեց դաշնակի առջեւ: Մարմինը ձիգ էր, լարուած գսպանակի նման: Երկու ձեռքերը, բռունցք արած, դրեց ծնկներին եւ արձանացաւ մի քանի վայրկեան, որպէս համակ կեդրոնացում: Դահլիճը, շունչը պահած հետեւում էր նրա իւրաքանչիւր շարժումին: Նա կամաց-կամաց բարձրացրեց գանգրահեր գլուխը, որը մինչ այդ կախուած էր ինքնամփոփ, հայեացքն ուղղեց մեզ համար անընկալելի տարածքին, ճերմակ աղաւնիներ յիշեցնող ձեռքերն իջան դաշնակի ստեղներին եւ ահա ծայր առան Կոմիտասի «Մշոյ Շորոր»-ի հարազատ հնչիւնները՝ ողողելով ներկաների սրտերը ազգային հպարտութեամբ ե՛ւ երգահանի ե՛ւ կատարողի համար:

Մեծ վարպետութեամբ մատուցուեցին Տիգրան Մանսուրեանի «Nostalgia»ն Լուդվիգ Վան Պեթհովենի հուշակաւոր «Appassionata»ն եւ Ֆրանց Լիստի «Sonata in B Minor»ը:

Դաշնակահարուհու մեկնաբանութիւնները համոզիչ էին եւ զգայացունց, անմիջական եւ յուզիչ: Նա ամէն մի կտորի կատարմամբ ասես մտնում էր մի նոր աշխարհ, ներշնչանքը կերպարանափոխում էր իր էութիւնը: Հնչիւնները կարծես սկիզբ էին առնում իր հոգուց՝ մերթ աղերսալից ու տխուր, մերթ հրճուալից եւ կենսուրախ եւ կամ՝ հզօր ու տիրական, վարակիչ պաթոսով լեցուն: Նա իր տարերքի մէջ էր:

Գրեթէ երկու ժամ Շուշանիկն իր արուեստով ապրեց իր ստեղծած կախարդական աշխարհում եւ մեզ էլ տարաւ իր ետեւից՝ պարգեւելով գեղարուեստական վայելքի անկրկնելի պահեր: Դահլիճում ցնծութիւն էր տիրում:

Հնչեցին վերջին ակորդները: Ժողովուրդն սթափուեց, վերադարձաւ իրականութեանը: Դաշնակահարուհին տուել էր իր ունեցածը: Նա սպառուած, բայց երջանիկ կանգնած էր բեմում, ձեռքերը կողքերից կախ: Յախուռն ծափերով, ծաղկեփնջերով եւ շնորհաւորանքներով ունկնդիրները յայտնում էին իրենց հիացմունքը: Մերթ ընդ մերթ ամբոխում երեւում էր Շուշանիկի հօր՝ յայտնի նկարիչ-քանդակագործ Վահրամ Յովակիմեանի դէմքը՝ երջանիկ ու կարմրաթուշ: Ճիշտ են ասել, որ «Խնձորը ծառից հեռու չի ընկնում»...

Շար.ը էջ 19

# ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՄԱՆ 65ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

## ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ, ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ Ս. ԿՈՆԴԱԿԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ



Ս. Յակոբ Եկեղեցւոյ Դպրաց ու սարկաւագաց դասը, Յովնան Արք. Տէրտէրեանի եւ եկեղեցւոյ հովիւ՝ Տ. Արշակ Քհնյ. Խաչատուրեանի հետ

Գեղեցիկ սովորութեան համաձայն, Ս. Յակոբ եկեղեցւոյ անուանակոչման առթիւ, ամէն տարի եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ կը մատուցուի եւ որուն կը յաջորդէ եկեղեցւոյ «Յիշատակութեան Հիմնադրամ»ի ննջեցեալներու հոգիներուն համար յատուկ հոգեհանգստեան պաշտօն, ինչպէս նաեւ դպիրներու կամ սարկաւագներու ձեռնադրութիւն ու եւ առ ի երախտագիտութիւն՝ հաւա-տացեալ անդամի մը հրապարակային պարգեւատրումը:

Այս տարի, Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Առաքելական եկեղեցւոյ անուանակոչման 65րդ տարեդարձին առթիւ, Կիրակի, 3 Դեկտեմբեր, 2006-ին, տեղի ունեցաւ եպիսկոպոսական Ս. Պատարագ, զոր մատուցեց Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Թեմական առաջնորդ, առընթերականութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Արշակ քհնյ. Խաչատուրեանի:

Արարողութեան ներկայ էր նաեւ Թեմի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանն ու Հայր Պարետ Ծայր. վրդ. Երէցեան, Ծխական Խորհուրդի բոլոր անդամ-անդամուհիները, եկեղեցւոյ յարակից մարմիններու ներկայացուցիչներն ու անդամները ու հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Այս ուրախ առիթով, դպիր ձեռնադրուեցան Լեւոն, Կէրի եւ Րօպի Գէմգէմեանները: Հետաքրքրական էր եւ միաժամանակ սրտաշարժ տեսնել Լեւոն Գէմգէմ-եան ծառայասէր հայրը, որուն կ'ընկերանային իր երկու զաւակները Կէրին եւ Րօպին, որոնք միասնաբար Ս. Խորանին առջեւ կանգնած սրբազան հօր յատուկ աղօթքով իրենց մազերուն մկրատումէն ետք ստացան հայ եկեղեցւոյ դպրութեան չորս աստիճանները խորհրդանշող եւ հաստատող Եկեղեցւոյ բանալին, աւելը, Սաղմոսաց գիրքն ու վառուած մոմեր:

Ապա նոր ձեռնադրուած նուիրեալ Լեւոն Գէմգէմեան հոգեւոր կոչումի հինգերորդ՝ կիսասարկաւագի աստիճան ստացաւ Առաջնորդ սրբազան հօրմէն, որ կը նշանակէր Սուրբ Պատարագին, առանց մասունքի սկիհը փոխադրելու իշխանութիւն:

Ապա առաջնորդ սրբազան հայրը եկեղեցւոյ դասը հրաւիրեց եկեղցւոյ 6 տասնամեակներու կեանքին անսակարկ ծառայող, ներկայ Ծխական Խորհուրդի անդամուհի եւ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի ու եկեղեցւոյ զանազան մարմիններու մէջ գործօն անդամուհիներէն տիկ. Լիւսիլ Պօղոս-

Շար.ը էջ 19

You can change your behavior and we will help you to do that
AA
HYPNOSIS CENTER



Artin Sagherian
Hypnotherapy
Tel: 818-434-8118
Call for an appointment or consultation

ՀԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ
Փորձառու Բժիշկ
ԱՐԹԻՆ ՍԱՂՐԵԱՆ
Վկայեալ Հիպնոսաբոյժ
* Պատանիներու վերաբերող վարուելակերպային փոփոխութիւն
* ADD-ADHD
* Անկողնային գիշերային թրջում (միզային)
* Եղունգների կրծում
Հասցէ. 1160 North Central Ave., # 210, Glendale
Հեռ. 818-434-8118
Միայն ժամադրութեամբ

# Massis Weekly

Volume 26, No. 45 Saturday, DECEMBER 16, 2006


## New Political Persecution by Kocharian Regime
## Authorities Press Coup Charges Against Karabakh War Veteran Zhirayr Sefilian

Law-enforcement authorities on Tuesday pressed coup charges against a prominent Lebanese citizen of Armenian descent who was arrested at the weekend for allegedly plotting to overthrow Armenia's government.

Zhirayr Sefilian, the leader of a nationalist group opposed to Armenian concessions to Azerbaijan in the Nagorno-Karabakh conflict, appeared to have avoided deportation from the country and looked set to stand trial there instead. Aling with Sefilian the authorities arrested his associate Vardan Malkhasyan.

The National Security Service (NSS) says Sefilian, a veteran of the 1991-1994 war in Karabakh, set up a clandestine organization to mount an armed uprising against the government during parliamentary elections due next spring. Dozens of its alleged members were also briefly detained over the weekend.

A court in Yerevan was considering behind closed doors late Tuesday the NSS's request to keep Sefilian under arrest pending investigation. The suspect was expected to be remanded in pre-trial custody.

The NSS's decision to formally charge Sefilian with publicly calling for a "violent change of constitutional order" suggested that he will not be deported from Armenia despite claims to the contrary made by his friends and associates.

"I rule out his deportation," Sefilian's Lebanese-Armenian wife, Nanor Parseghian, told RFE/RL earlier in the day. "First of all, because his passport's validity period has expired and no third country will agree to take him in and transfer to Lebanon."

The case against the decorated war veteran was condemned by more than a dozen Armenian opposition parties. In a joint statement issued late Monday, they accused the authorities of stifling dissent ahead of the upcoming elections and demanded his immediate release from jail.

The statemenet specifically says, "We condemn any activity reminding the year 1937 and announce officially that the authorities which have long exhausted all the civilized resources, will not be able to create an atmosphere of fear but will suffer the just anger of the society.

We demand to set Zhirayr Sefilian, Vardan Malkhasyan and their friends free immediately.

We also demand to give Zhirayr Sefilian citizenship of Armenia for sacrificing his whole life for the well-being of his country".

The statement was signed by "New Times", "Fatherland and Honor", "Republic", "Democratic Path", "Democratic Homeland", RA People's Party, RA Democratic Party, "National Self-Determination Union", "Constitutional Right Union", RA Progressive party, "Orinats Yerkir", S.D. Hunchakian party, "National Democrats' Union", and Nzhdehyan party.

A similar statement was also released by 18 members of Armenia's parliament, most of them representing opposition factions. Three of them also offered to pay bail on Sefilian's behalf.

The inquiry was launched by the NSS under an article of the Armenian Criminal Code that was invoked by state prosecutors in their controversial criminal case against the country's leading opposition groups that tried unsuccessfully to topple the government with a campaign of street protests in spring 2004.

## U.S. Aid To Armenia Linked With Clean Polls

The provision of $236 million in additional U.S. economic assistance to Armenia is conditional on proper conduct of its forthcoming parliamentary and presidential elections, U.S. officials said on Tuesday.

The five-year aid package is part of the U.S. administration's Millennium Challenge Account (MCA) program that seeks to promote economic and political reforms around the world. Armenia and neighboring Georgia remain the only ex-Soviet states eligible for the scheme. The Millennium Challenge Corporation, a U.S. government agency managing it, has already disbursed the first $1.4 million installment of the sum earmarked for Armenia.

"In order for Armenia to continue to receive this funding, the Armenian government must maintain a high level of performance in ruling justly, investing in people and promoting economic freedom," Anthony Godfrey, the U.S. charge d'affaires in Yerevan, told reporters in Yerevan. "Only by continuing to institute democratic reforms, including ensuring a free and fair process in the run-up to the 2007 and 2008 elections, can Armenia make sure that its people can continue to benefit from this $236 million program."

Earlier this month, the MCC reaffirmed Armenia's eligibility for the program despite serious concerns about the Yerevan government's democracy and human rights records that were expressed by the corporation's chief executive, John Danilovich. In a May letter to Robert Kocharian, Danilovich said that a "continued negative trend in Armenia's policy performance would endanger the continuation of the recently signed [MCA] Compact."

Godfrey warned that the MCC might therefore reconsider its decision in the course of the next year. "Normally the board will review eligibility criteria one time per year," he said.

Continued on page 3

## Karabakh Constitution Adopted In Referendum

Nagorno-Karabakh's first-ever constitution declaring the Armenian-populated territory an independent state was overwhelmingly approved by voters in a weekend referendum criticized by the international community, officials in Stepanakert said on Monday.



Karbakh Armenians vote for a new constitution

According to preliminary results of the vote released by the local Central Election Commission, almost 99 percent of residents who went to the polls on Sunday voted for the constitution drafted by the leadership of the Nagorno-Karabakh Republic (NKR). The CEC put the voter turnout at 87 percent.

To pass, the basic law needed the backing of at least one third of the region's 90,000 eligible voters. The authorities in Stepanakert said its passage reaffirmed Karabakh's de facto secession from Soviet Azerbaijan in the late 1980s.

"I am confident that the adopted document will reinforce Nagorno-Karabakh statehood and deepen democratization processes going on here," Arkady Ghukasian, the NKR president, told reporters in the Karabakh capital.

Both the European Union and the Organization for Security and Cooperation in Europe (OSC) rejected the referendum. In a statement, the OSCE's chairman in office, Belgian Foreign Minister Karel De Gucht, called the vote potentially harmful to the ongoing conflict settlement process, which, he said, has shown "visible progress" and is at a "promising juncture."

## Senate Vote On New U.S. Envoy To Armenia Again Delayed

The U.S. Senate has again delayed the confirmation of President George W. Bush's choice of the new U.S. ambassador to Armenia over his administration's reluctance to term the mass killings of Armenians in Ottoman Turkey a genocide.

The Senate failed to vote on the nomination of career diplomat Richard Hoagland before going into winter recess late Monday. This means that Bush will have to again nominate Hoagland for the vacant post or to propose another candidate to the new, Democrat-controlled chamber next month. He also has the option of making a so-called "recess appointment" that does not require Senate confirmation.

The previous U.S. ambassador, John Evans, is believed to have been recalled by the Bush administration because of his public description of the slaughter of more than one million Ottoman Armenians as genocide. Hoagland refused to use the politically sensitive term with regard to the 1915-1918 massacres during confirmation hearings at the Senate Foreign Relations Committee this summer, angering the influential Armenian-American community and pro-Armenian members of Congress.

The panel twice delayed a vote on the nomination before endorsing it on September 6. Hoagland's confirmation by the full Senate seemed a forgone conclusion until a pro-Armenian Democratic senator, Robert Menendez of New Jersey, put a "hold" on it a week later.

Menendez reaffirmed his opposition to Hoagland's appointment after securing his reelection in last month's midterm congressional elections that saw both houses of Congress fall under Democrat control. He was joined on December 1 by the new Senate Majority Leader Harry Reid, a longtime advocate of Armenian issues, in urging Bush to propose another nominee.

## House Rebuffs U.S. Financing For Caucasus Railway

The House of Representatives last week approved an amendment to bar the U.S. Export-Import bank from financing a railway corridor that links Turkey, Georgia and Azerbaijan.

Lawmakers approved S.3938, the Export-Import Bank Reauthorization Act of 2006, which included an amendment by Senators Robert Menendez (D-NJ) and Rick Santorum (R-PA) ensuring that no Export-Import funding is used for a rail line connecting Turkey, Georgia and Azerbaijan while circumventing Armenia. The provision was similar to an amendment offered in the House version by Congressman Joseph Crowley (D-NY), along with Congressmen Edward Royce (R-CA) and Brad Sherman (D-CA), which was unanimously approved by the House Financial Services Committee in July.

Representative Crowley said the 258-kilometer project did not warrant U.S. support because it bypasses Armenia and effectively continues "an illegal economic blockade against the Caucasus nation." As designed, the project is "an effort to hurt the Armenian people and can only result in greater regional instability," Crowley said.

The amendment was approved without opposition.

## Former Prime Minister Armen Sarkissian Speaks at World Economic Forum in Turkey

ISTANABUL -- Armen Sarkissian, former Prime Minister of Armenia and Director of Eurasia Centre at the University of Cambridge, was an invited speaker at the World Economic Forum in Turkey. Opened by Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan, the two-day Forum (23-24 November) focused on Turkey's EU accession issues, regional geopolitics, competitiveness and business opportunities in Turkey and the region.

Some four hundred delegates took part in the Forum held in Istanbul. Under the theme "Connecting Regions - Creating New Opportunities", the conference brought together high-level international business and political leaders, top Turkish business people and government officials.

Dr Sarkissian spoke on "Thinking Strategically on Europe's Risks", alongside Kursat Tuzman, Minister of State for Foreign Trade of Turkey, Richard McCormack, Vice-Chairman of Merrill Lynch (USA), and others. Sarkissian placed Europe's energy needs and security in the larger context of Central Eurasia. "We need new thinking about energy dependence and security," said Sarkissian, explaining that "in the post Cold War and increasingly globalised world, all major states and multinational organisations have dependencies and security needs which could only be mitigated by including smaller players in the process of dialogue". He drew examples from the Caspian region and it's increasingly critical role in "East-West" relations.

Dr Sarkissian also moderated a panel on Europe's energy needs. Called "Guardians of Europe's Energy", the panel discussed Europe's quest for energy alternatives and its long term energy security. One development is the proposed Nabucco project, a 3,000-km pipeline bringing Iranian and Caspian gas to Europe, estimated to cost • 6 billion. Regarding Turkey's role, panellist Gareth Evans, president of the Belgium-based International Crisis Group, argued that Turkey's geopolitical significance leads people to exaggerate its significance in energy. He believes that the geopolitical issues will be a more important factor for Turkey's potential as an EU member than its role as an energy hub. Others in the panel included Alireza Attar, Iran's Deputy Foreign Minister for Economic Affairs; Werner Auli, CEO and head of Nabucco Project, OMV Gas International; Richard Paniguian, BP Group Vice-President for Russia, CIS, Middle East and Africa; Selahattin Cimen, Turkish Deputy Undersecretary of Energy; and Jan Nahum, CEO of Petrol Ofisi.

Since 2002, Armen Sarkissian has been a regular speaker at the annual World Economic Forum in Davos and the organisation's regional forums in Russia, Ukraine and Turkey.



**Sarkissian Speaks at World Economic Forum in Turkey**

## Armenia Remembers 1988 Quake Victims

Armenia commemorated the 18th anniversary of the powerful earthquake that killed some 25,000 people and devastated much of northwestern part of the country.

The main official ceremony took place in the country's second largest city of Gyumri where thousands of people continue to huddle in temporary shelters despite considerable reconstruction carried out in recent years. An open-air liturgy was served by representatives of the local diocese of the Armenian Apostolic Church at the site of a memorial to earthquake victims.

Robert Kocharian, who attended the religious serrvice, was confronted afterwards by scores of local women with a litany of grievances, most of them relating to their wretched housing conditions. His bodyguards were at pains to hold back the crowd.

"I have supported a disabled child for 18 years, it's impossible to continue like this," a middle-aged pleaded with Kocharian.

"Mr. Kocharian, please help us solve the problem of our hostel," screamed another woman who claimed to be facing eviction from a ramshackle building that houses dozens of impoverished families.

The Armenian government did not finance construction of new homes in the earthquake zone this year and is unlikely to do so in 2007. It is due to spend instead 700 million drams ($1.9 million) on buying new apartments for over 300 Gyumri families.

Kocharian discussed the matter at a two-hour meeting with senior officials from the municipal and regional administrations. His planned news conference was cancelled for unknown reasons.

## Armenian Teen Wins BBC Talent Contest

LONDON -- A 17-year-old Armenian singer has won the BBC World Service's "Next Big Thing" competition in London with her song, "I Like," written by her siblings.

The BBC reported Saturday that the singer Silva Hacopyan beat out six other acts from around the world at the final competition.

Judges praised the song as "fresh and new" and they called her performance "second to none." Silva had worked with her brother and her sister on the fetching song. She later said that the glowing comments from the judges gave her the confidence to "make the step up to the international level."

Silva told the BBC, "It's terrific; it's unbelievable to be in first place."

The competition, part of the BBC's "Generation Next" season, featured performers under 18.


**"Next Big Thing" competition winner Silva Hacopyan**

## Yezdi Family Protests Member's Killing With Self-Immolation

YEREVAN -- An elderly woman and her three grandsons were reportedly in a serious condition after setting themselves on fire in protest against what they see as a government cover-up of the recent killing of a family member.

Eyewitnesses said Gyulizar Avdalian, 68, and the three teenage boys tried to burn themselves during a demonstration outside the presidential official residence that was staged by over three dozen residents of their village of Zovuni in northeastern Armenia. The protesters, most of them Yezidi Kurds, demanded a fresh criminal investigation into the violent death of Avdalian's son Kyaram.

The 42-year-old farmer was beaten to death on November 6 in still uncertain circumstances. His relatives say he was attacked by several men led by the ethnic Armenian mayor of the neighboring village of Lchashen, who is said to have been locked in a bitter land dispute with the Avdalian family.

However, law-enforcement authorities arrested and prosecuted another man who the angry protesters say had nothing to do with the crime. Two members of the extended Avdalian family were received by Prosecutor-General Aghvan Hovsepian following the attempted self-immolation. A spokeswoman for Hovsepian said he promised to order prosecutors in Yerevan to take over the inquiry.

The dead man's mother and children were hospitalized immediately after the desperate action. "I've just visited them. Their condition is critical," the leader of Armenia's Yezidi community, Aziz Tamoyan, told RFE/RL.


**Gyulizar Avdalian sets herself on fire during a protest outside the president's office in Yerevan**



## St. Nersess Releases New Book on Worship in the Armenian Church

**By Deborah Belonick**



CRESTWOOD, NY - Deans Rev. John H. Erickson and V. Rev. Daniel Findikyan marked decades of continued collaboration between their respective seminaries, St Vladimir's and St Nersess Armenian Seminary, at a book launch December 6, 2006 held in the Metropolitan Philip Hall of St. Vladimir's Orthodox Theological Seminary.

The launch announced a newly released title, Worship Traditions in Armenia and the Neighboring Christian East, edited by Roberta R. Ervine. Also previewed was a stunning upcoming release by Abraham Terian: a translation of an early fourth-century letter from Macarius I, Patriarch of Jerusalem, to the son of St Gregory the Illuminator, the founder of the Armenian church.

Dr. Ervine is Associate Professor of Armenian Studies while Dr. Terian is Professor of Armenian Patristics at St. Nersess.

### Third in the AVANT Series

At the celebration, Worship Traditions was fêted as the third book published in the AVANT series, a cooperative effort begun in 2004 between St Vladimir's Seminary Press and St Nersess Armenian Seminary. The series provides Armenian patristic, dogmatic, liturgical, and other early religious literature to the English-speaking world. Worship Traditions is a collection of articles dedicated exclusively to the liturgical traditions of the Eastern Christian churches, gleaned from a scholarly symposium connected with the commemoration of the fortieth anniversary of St Nersess Seminary's establishment.

### Vanguard of Liturgical Scholarship

Dr Paul Meyendorff, the Father Alexander Schmemann Professor of Liturgical Theology at St Vladimir's, who spoke about the content of the book and its place in contemporary liturgical studies, noted, "The importance of Armenian liturgy has heretofore been largely ignored, because churches using those traditions are relatively small and their languages were not accessible to Western scholars in the vanguard of liturgical scholarship. However, within the last 50 years, the field has taken a turn toward comparative theology, and the Armenian rite -which was tremendously influenced by, and influenced as well, all major liturgical traditions- has gained importance. With this book, the Armenian rite enters into the mainstream of liturgical studies."

He further noted that the first article in the book, by leading liturgical scholar Robert F. Taft, SJ, "Was the Eucharistic Anaphora Recited Secretly or Aloud? The Ancient Tradition and What Became of It," addressed a "burning issue in most living churches that live the liturgy," and quipped, "It alone is worth the price of the book."

### Panoramic Snapshot of Liturgical Thinking Worship Traditions in Armenia"

Dr Roberta R. Ervine, editor of Worship Traditions, characterized the book as a "panoramic snapshot of liturgical thinking" that encompassed both renowned scholars and newcomers and captured the past, present, and future in the field of liturgical studies. She acknowledged her colleagues at St Nersess as those always ready to serve the church and those always on the cutting edge of scholarship and visionary initiative, saying, "I work with people willing to jump off a cliff and be caught by the wings of the unseen Spirit." Dr Ervine, Associate Professor of Armenian Studies at St Nersess, is a graduate of Columbia University, with extensive teaching experience at all levels, lately at the Hebrew University of Jerusalem (1995-2001), where she taught a wide spectrum of courses in Armenian Studies and developed graduate and undergraduate curricula.

### Macarius: Most Ancient Description of Armenian Worship

Dr Abraham Terian, series editor and Professor of Armenian Patristics and Academic Dean at St Nersess Armenian Seminary, announced the upcoming fourth AVANT title, of which he is the author: a translation of and commentary on a letter by Macarius I, dated AD 335. He noted that the "very significant" letter is situated chronologically between two other early texts -the Didascalia Apostolorum and the Apostolic Constitutions- and is among the handful of primary sources dealing with liturgy in the early fourth century.

The letter, which describes how the rites of Baptism and Eucharist were performed in the early church, along with various rites of anointing, could be considered a companion to St Cyril of Jerusalem's Catechetical Lectures, which explains the theological meaning of these two major sacraments without describing how they were carried out. "This upcoming book, is for all those interested in the Old Jerusalem sacramental tradition," said Dr Terian.

### In Memory of Dr. Armen Jerejian

Fr. Findikyan, Master of Ceremonies for the event, also acknowledged honored members of the audience: the family of Prof. Armen Jerejian (1916-1994), in whose memory the book is dedicated. Dr. Jerejian was the first to teach Armenian at Columbia University in New York. Ervine also acknowledged other contributors to the volume, Dr Edward G. Mathews, Jr., Brother Stavros of New Skete, and Dr Terian.

Additionally, Theodore Bazil, Managing Director of St Vladimir's Seminary Press, expressed his gratitude to St Nersess faculty for their cooperation on the series, and Rev. Alexander Rentel, Assistant Professor of Canon Law and Byzantine Studies at St Vladimir's, gave the final benediction.

Copies of Worship Traditions in Armenia and the Neighboring Christian East, as well as the previous numbers in the AVANT series, are available for purchase through St. Vladimir's Seminary Press, www.svspress.com, which coordinates production, marketing, distribution and sales, or call 1-800-204-2665.

## Kach Nazar Publication's Successful Fundraising for Armenia's Orphaned and Disabled Children Christmas Gift

LOS ANGELES, Dec. 6th—Kach Nazar publication's 7th Annual Armenia's Christmas Children Fundraising was held on Sunday Dec. 3 in Glendale California. This successful fundraising telethon generated over $100,000 in direct contribution from Armenian's living in the Glendale-Burbank-La Crescenta area. This 7th annual telethon's brain child is Ovanes Balayan, who has been able to provide Christmas Gifts to orphan and disabled children in Armenia. The direct contribution to this annual event was a great achievement for the Armenian community living in the tri-cities.



The telethon was broadcasted live from AMGA channel 26 and Jam-e-Jam International TV.

More than 2000 families participated in this great event. The event was also supported by the local businesses and organizations, especially with generous contributions of $500-$3,000 from Commerce Casino, Wells Fargo Bank, Glendale KIA, Social Democratic Hnchak Party, Yeghiayan & Associates, Sarian Organic Honey, Glendale Medical Pharmacy, Tamara Ice Cream, Universal Service Exchange, Glendale West Pharmacy, Sandy's Rug, Apolitano Grape Seed Oil Co., Remedy Drugs, Gefer Farms, Golden Farms Market, Ojakh Banquet Hall, and Yerevan Printing.

The organizational work was also donated and supported by Tomik Alexanyan, providing computer equipment and technical support, and local Armenian-American personalities, including, Glendale City Council Member Frank Quintero, Nune Avetisyan, Deacon Stepan Hovakimyan, Rev. Antoine Saroyan Armenian Catholic Church, Sarkis Majarian, Dr. Hambik Sarrafian, Shahé Keuroghlian, Vrej Agajanian, George Apelian, Khatchik Khou-tikian, Gagik Tamrazyan, Boghos Arakelyan, Armen Hovanessyan, Ello, and many other local Armenian-American volunteers and youth.

The 7th annual telethon was organized by handful of dedicated individuals, specially Ovanes Balayan, which were able to galvanize the community around a noble cause of providing gifts to needy orphan and disabled children in Armenia. The small geographic coverage for this event, primarily Glendale-Burbank-La Crescenta area, brought greater participation from Armenian-Americans.

The event was also sponsored by Armenian National Philharmonic, Yerevan, Armenia.

As of today the local donations to the telethon is still continuing. The future plans for the fund will include rehabilitation and renovation of Armenia's orphanages.

For donations you can contact Wells Fargo Bank at 818-550-5021 and contribute to A.C.C. Gift Fund, account number 367388121. A tax deductible donation.

## U.S. Aid To Armenia Linked With Clean Polls

**Continued from page 1**

"But in the case of a sharp drop in any of the [MCA eligibility] indicators or categories, it can make a more abrupt decision."

"But it's our great hope that that won't happen," the U.S. diplomat added.

Alex Russin, an MCC executive in charge of the compact's implementation, made it clear that next year's parliamentary elections will be a crucial test for the Armenian authorities' stated commitment to democracy and rule of law. "We are concerned about the upcoming elections, and I hope that it will be a chance for the government and the Armenian people to demonstrate greater improvement over what happened last year," Russin said in an apparent reference to the disputed November 2005 referendum.


MISSION LIQUOR
Mission Liquor & Wines
WE WILL BEAT ANY ADVERTISED PRICE!
Chivas Regal
12-Yr Scotch
750ml
$16.99
1.75L
$32.99
Johnnie Walker
Black Label
750ml
$20.49
1.75L
$47.99
Dewar's
12-Yr Scotch 750ml
$16.99
White Label 1.75L
$24.99
Grey Goose
Vodka 750ml
$20.99
Belvedere
Vodka 750ml
Absolut
Vodka
750ml
$13.99
1.75L
$25.99
Hennessy
Cognac 750ml
VS
$20.49
VSOP
$29.99
Russian
Standard
Vodka
750ml
$13.99
Patron
Anejo/Reposado/Blanco
750ml
$33.99
Stolichnaya
Vodka 1.75L
$17.99
1800 Tequila
Blanco/Reposado
750ml
Courvoisier
Cognac 750ml
VS
$16.99
VSOP
$26.99
Johnnie Walker
Red Label
750ml
$14.49
1.75L
$28.99
Sauza
Tres Generaciones
Tequila 750ml
$22.99
Anejo/Blanco/Reposado
Level
Vodka 750ml
$17.99
Imperia
Vodka 750ml
Courvoisier
Cognac XO 750ml
$79.99
Hennessy
Cognac XO 750ml
$94.99
Johnnie Walker
Blue Label 750ml
$139.99
Dewar's
Signature 750ml
1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Liquor (626) 794-7026 ● Tobacco (626) 797-0500
Corner of Allen & Washington ● Open Monday—Saturday 9 am - 8 pm
www.missionliquor.com
*Minimum 12 Bottle Mix & Match ● This ad expires on 12/31/06 ● We reserve the right to limit quantities ● Sales tax excluded ● Prices subject to change without notice ● No checks or credit cards
121206

## ՀԱՅ ՍՓԻՒՌՔ

### ԿԻՊՐՈՍ

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Ս.Դ.Հ.Կ.-Ի ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻՆ ԵՈՒՐՕ-Ի ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՋ ԲԱԶՄԱՁԱՅՆ ԶՐՈՅՑ



*Կլոր-սեղանին կը մասնակից տնտեսագէտ-օրէնսգէտները*

*Կազմակերպութեամբ Ս.Դ.Հ.Կ. Կիպրոսի Վարիչ Մարմնին, Չորեքշաբթի, 29 Նոյեմբեր 2006-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Ազգային Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ բազմաձայն զրոյց նուիրուած՝ Կիպրոսի եուրօ-ի որդեգրման մարտահրաւէրներուն շուրջ: Ինչպէս ծանօթ է, 2008 Յունուարէն սկսեալ, Կիպրոսի մէջ պիտի օգտագործուի եուրօ-ն, որպէս պաշտօնական դրամանիշ:*

*Ձեռնարկին ներկայ էին Կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ Պր.Վարդգէս Մահտեսեան, տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ, շուրջ 80 կիպրահայ հայորդիներ:*

*Յանուն կազմակերպիչ կուսակցութեան, ձեռնարկին բացման խօսքը կատարեց Աւետիս Փոշօղլեան, որ անդրադառնալով նիւթին հրատապութեան, հրաւիրեց օրուան կլոր-սեղանին մասնակիցները, արտայայտուելու եուրօ-ի մարտահրաւէրներու տնտեսական, իրաւաբանական, քաղաքական եւ հոգեբանական անկիւններէն դիտուած: Կլոր-սեղանին կը մասնակցէին տնտեսագէտ-օրէնսգէտներ, կիպրահայ գաղութի խոստմնալից տարրեր՝ Լեւոն Առաքելեան, Ստեփան Յարութիւնեան եւ Գէորգ Զէյթունցեան: Բազմաձայն զրոյցը համադրեց եւ ձեռնարկը հմտօրէն վարեց «Ազատ Ձայնի»ի խմբագիրներէն, Ս.Դ.Հ.Կ.ի Կիպրոսի Վարիչ Մարմնի անդամներէն Գէորգ Զէյթունցեան:*

*Կլոր-սեղանին մասնակիցները անդրադարձան եուրոյի պատմականին, անոր որդեգրման եղանակներուն, օրէնսդրական եւ քաղաքական հարցերուն: Թէ ինչպիսի անդրադարձներ կրնայ ունենալ եուրօ-ն կիպրոսի քաղաքացիներուն տնտեսական կացութեան վրայ շուկային, առեւտուրին եւ մարդոց նիւթականին վրայ, ներկաներ իմացան բաւականին հետաքրքրական տեղեկութիւններ:*

*Օրուան խօսքերէն եւ սպառիչ բացատրութիւններէն ետք ներկաներ հարցումներով մասնակից եղան բազմաձայն զրոյցին, շատեր իրենց յուզող հարցերով առաւել հետաքրքրական դարձուցին զրոյցը:*

*Օգտաշատ ձեռնարկը ծափահարելի էր բոլոր առումներով:*

***Թղթակից***

# ՏԻՔՕ-ՍԴՀԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ



*Ս.Դ.Հ.Կ Կիպրոսի Վարիչ Մարմնի անդամները Ժողովրդավարական կուսակցութեան (ՏԻՔՕ) նորընտիր նախագահ Մարիոս Կարոյեանի հետ*

*Չորեքշաբթի, 29 Նոյեմբեր 2006-ի առաւօտեան ժամը 11:00-ին, Ս.Դ.Հ.Կ Կիպրոսի Վարիչ Մարմնի անդամներ հանդիպում մը ունեցան Ժողովրդավարական կուսակցութեան (ՏԻՔՕ) նորընտիր նախագահ Մարիոս Կարոյեանի հետ: Հանդիպումը տեղի ունեցաւ ՏԻՔՕ-ի գրասենեակին մէջ:*

*Ս.Դ.Հ.Կ.ի Վարիչ Մարմնի անդամներ ՏԻՔՕ-ի կուսակցապետին հետ նախնական ծանօթացումէն ետք շնորհաւորեցին անոր կուսակցապետ ընտրութիւնը: Ապա Մ.Կարոյեան ծանօթացաւ Հնչակեան Կուսակցութեան պատմութեան, գաղափարախօսութեան, գործունէութեանց եւ Կիպրոսի աշխուժութեան: Այնուհետեւ կողմերը քննարկեցին Կիպրահայ գաղութին հետ կապուած հարցեր, Հայաստանի Նախագահ Ռոպերթ Քոչարեանի Կիպրոս այցելութեան արձագանգները՝ խոստանալով յետագային մշակելու համագործակցութեան գործնական ծրագիրներ:*

*Շինիչ եւ օգտաշատ հանդիպումը իր լրումին հասաւ սիրալիր մթնոլորտի մէջ:*

# ՄԻԱՅՆ ԹԷ ՅԱՆԳԻՍՏ ԹՈՂՈՒՆ ԴՐՍԵՑԻՆԵՐԸ

***Շարունակուած էջ 1-էն***

դեր վերցնել, թող որ ան կորսնցուցած է երբեմնի իր բարոյական հեղինակութիւնը: Սպիտակ տան բանբեր, Թոնի Ընոյի յայտարարութիւնը աւելի բարիւղ կը թափէ երկրի արդէն իսկ բռնկման պատրաստ կացութեան վրայ երբ այդ առիթով յարձակման թիրախ կը ծառայեցնէ Սուրիան եւ ... դրացիները, եւ կը պատուիրէ թիկունք կանգնիլ երկրի ժողովրդավարական վարչակարգին:

Փարիզի անմիջական դիրքորոշումը Ֆրանսայի Վարչապետ Տոմինիք Տը Վիլլէբինի բերնով, ի նպաստ Սինիօրայի կառավարութեան՝ կորսնցնել կու տայ Լիբանանի արժանաւոր բարեկամ ասպետական Ֆրանսայի միջնորդութեան մը կարելիութիւնները:

Ռուսիա եւ Քաթար կը սպասեն երկրի ընթացիկ տագնապի բիւրեղացման, կարենալ դիրքորոշուելու համար ի նպաստ Լիբանանին՝ Միջազգային Դրամատան յատկացնելիք տնտեսական օգնութեան կապակցութեամբ:

Պիտի արժէր նշել նաեւ նոր զէնքերու առաքումը, ինչպէս նաեւ օտար զինեալներու մուտքը դէպի Լիբանան կը շարունակուի:

Բազմաթիւ տուեալներ կան, որոնք կը մթագնեն Լիբանանի երկնակամարը մութ ամպերով:

Հետեւելով վերոյիշեալ գործընթացներու, յայտարարութիւններու, փոխանցուած պատգամներու՝ կը յանգինք այն եզրակացութեան, որ միջազգային քաղաքական ու դիւանագիտական շուկան սպասման մէջ է քաղաքական յեղաշրջումի մը, Լիբանանի կեանքէն ներս: Իսկ այդ յեղաշրջումը կրնայ եւ եղաշրջական չըլլալ, այլ կրնայ եւ դառնալ յեղափոխական, որքան ալ Հանրապետութեան Նախագահը Էմիլ Լահուտ նուազագոյնին հասցնէ զինական վտանգը երկրէն ներս այն բարեմիտ դատողութեամբ, թէ «անոնք որոնք իրենց զէնքը կը գործածեն թշնամիին դէմ, ոչ մէկ ժամանակ զանոնք չեն կրնան դարձնել իրենց եղբայրներուն դէմ»:

Բայց ըսենք, թէ պարզ դարձաւ, որ Լիբանանցին տէր չի կրցաւ կանգնիլ իր երկրին, այն երկրին՝ որ տասնամեակներ ամբողջ, իր միջհամայնքային օրինակելի համակեցութեամբ նախանձը շարժեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհին: Բացայայտուեցաւ այն, որ լիբանանցին չկարողացաւ տէր կանգնիլ իր երկնապարգեւ հայրենիքին, այն հայրենիքին, որ տասնամեակներ կրթական, մշակութային, տնտեսական ու խաղաղ գոյակեցութեան առաջատար օրրանը հանդիսացաւ Միջին Արեւելքի բերգառատ տարածաշրջանէն ներս:

Թէ ու՞ր պիտի հասնի դեռեւս արտաքնապէս խաղաղ, բայց ներքնապէս մխացող Լիբանանի այս սպառիչ պարանաձգութիւնը, յստակ չէ: Բայց գիտենք, համոզուած ենք, որ բարին կը գերիշխէ եթէ դրսեցիները հանգիստ թողուն զայն:




## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական
Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք
հետեւեալ հասցէով

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

**ԳՐԱԿԱՆ**

## ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ»

**(Դ. ՀԱՏՈՐ, 810 ԷՋ, ՏՊԱՔԱՆԱԿ 1,000: Ե. ՀԱՏՈՐ 912 ԷՋ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱՇԽԵԱՆ, Յ.Խ. ԲԱՐՍԵՂԵԱՆ: ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ, ԵՐԵՒԱՆ 1998 ԵՒ 2001**

***ՏՕՔԹ. ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱՅԵԱՆ***




«Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան»-ի չորրորդ հատորը լոյս տեսաւ 1998ին, իսկ հինգերորդ հատորը 2001ին: Չորրորդ հատորը կ՚ընդգրկէ Ն գիրէն Վ գիրերը իսկ Ե հատորը Տէն Ֆ գիրերը, առաւելի լրացուցիչ բաժին մը «Մնացորդ եւ Վերանուանուած Տեղանուններ» եւ «Ուղղուած կամ Ճշգրտուած Տեղանուններ»: Վերջին 62 էջերը կոչուած է «Անուանացանկեր» որ տրուած է հինգ հատորներուն նիւթերուն ցանկը»: Իւրաքանչիւր հատոր ունի մօտաւորապէս 24,000 տեղանուն: Չորրորդ հատորին պատրաստութիւնը վերջացած է 1995ին, իսկ հինգերորդինը՝ 1999ին: Վերջին 3 հատորները հրատարակուած են Գալուստ Կիւլպէնկեան Բարեգործական Ֆոնտի միջոցաւ:

«Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան»ի Ա. հատորը լոյս տեսաւ 1986ին, Բ. հատորը 1988ին, իսկ Գ. հատորը՝ 1998ին: Սոյն երեք հատորներուն մասին ժամանակին անդրադարձած եմ: (Տեսնել «Ասպարէզ» 23 Յունուար 1988, 27 Հոկտեմբեր 1990 եւ 13 Յուլիս 2004ի Թիւերը: Բ. հատորի մասին գրախօսականս երեւցաւ նաեւ «Նոր Օրի» 15 Սեպտեմբեր 1990ին, իսկ Գ. հատորի մասին գրածս նոյն թերթին 28 Օգոստոս 2004 Թիւերուն մէջ: Իմ հետաքրքրութեանս նիւթը եղած է արեւմտահայութեան ճակատագիրը Մեծ Եղեռնէն անմիջապէս առաջ եւ վերջը:

Սփիւռքի պարբերական մամուլին մէջ երբեք չեմ հանդիպած այս հատորներու - մօտ 5,000 էջ - մասին որեւէ գնահատական կամ քննադատական գրութեան:

Ինչպէս նախկին հատորներուն մէջ, նոյնպէս ալ այս վերջին հատորներուն մէջ Արեւմտեան Հայաստանի մասին տեղեկութիւնները թերի են, յաճախ յուսախաբ ընելով ընթերցողը: Այս թերիները երեք տեսակ են: Քաղաքի մը կամ մանաւանդ գիւղի մը տեղադրութեան ճշգրտութեան պակաս: Հեղինակները յաճախ շատ նախնական-բրիմիդիվ- ձեւով կու տան որոշ տեղի մը բացատրութիւնը, գրեթէ անկարելի դարձնելով փնտռուած տեղը: (Այս կէտը յիշած եմ նախկին գրախօսականներուս մէջ, բայց կը կրկնեմ զայն, ձանձրացուցիչ ըլլալու մեղքը վրաս առնելով, քանի որ շատ կարեւոր է այսպիսի գործի մը պատրաստութեան մէջ):

Օրինակով խօսքին: Ընթերցող մը կ՚ուզէ գտնել Վազան հայաբնակ գիւղը, իր մեծ հօրը ծննդավայրը: Ան կը բանայ չորրորդ հատորին 731րդ էջը եւ ուրախ է որ Վազանի մասին յօդուածը գտաւ, եւ կը կարդայ հետեւեալը: «Վազան գիւղ (քաղաք) Մեծ հայքի Բարձ Հայք աշխարհի Եկեղեաց գաւառում), հետագայում մտնում է Էրզրումի նահանգի Էրզրումի գաւառի Դերջան գաւառակին մէջ: Կառուցուած է Եփրատ գետի վերին հոսանքի ձախակողմեան Աղիջուր վտակի հովտում, հարթ ու ճահճոտ վայրում, Ծումինա (Ջեմին) յայտնի բերդից մօտ 4 քմ. հեռաւորութեամբ»: Ինչպէս կը տեսնէք, վերի տրուած բացատրութիւնը երբեք չ՚օգներ գտնալու Վազան գիւղը: Պէտք էր ըսուէր թէ Վազան գիւղը կը գտնուի Դերճան (Նախկին Մամախաթուն) քաղաքէն 30 քմ. Հարաւ Արեւմուտք եւ 1955էն ի վեր կը կոչուի Եօլիւստիւ:

Երկրորդ տեսակի թերին այս հատորներուն այն է թէ հեղինակները պէտք եղածին չափ չեն օգտագործած կամ անտեսած են ահագին հարուստ տեղեկութիւններ որոնք կը գտնուին արեւմտահայութեան յուշամատեաններուն մէջ: 1930էն ի վեր, գտնուեցան մտաւորական կամ ալ ոչ մտաւորական նախանձախնդիր հայեր ու հայրենակցական միութիւններ, որոնք գրի առին ու առանձին հատորներով հրատարակեցին Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիոյ 1914ի հայաբնակ քաղաքներուն ու գիւղերուն գրեթէ ամբողջական պատմութիւնը: Այս պատմութիւններու ցանկը հարիւր հատորէ աւելի է, պարունակելով վաթսուն հազար էջերէ աւելի տեղեկութիւններ մեր հինգ հազար տարուայ գողցուած հայրենիքին մասին: Ասոնցմէ իւրաքանչիւր հատորը կը ներկայացնէ չգանձուած պարտամուրհակ (չէք) մը ապագային հայութեան համար:

Հոս կ՚ուզեմ յիշել թէ աշխարհագրական բառարանները յաւելեալ ծանօթութիւններու համար սկզբնաղբիւր (րիֆըրէնս) չեն տար: Սակայն հայութեան պարագային, նկատի ունենալով մեր աշխարհատարած Սփիւռքը՝ խիստ փափաքելի կը դարձնէ յաւելեալ տեղեկութիւններու աղբիւրները տալ բազմահատոր տեղանուններու բառարանի մը մէջ:

Տեղանուններուն Բառարանին երրորդ թերութիւնը հետեւեալն է: Յիսուն տարի անցած է այն օրէն երբ Թուրք կառավարութիւնը վերանուանեց գրեթէ բոլոր հայաբնակ եւ նոյնիսկ ոչ հայաբնակ քաղաքները ու գիւղերը արեւելեան նահանգներուն մէջ: Տեղանուններու Բառարանին մէջ գոյութիւն չունին այս նոր անուններէն նոյնիսկ մէկ հատ:

Օրինակներ տանք մեր վերի նկատողութիւններէն:

Չորրորդ հատորին եօթներորդ էջին մէջ կը կարդանք «Նիքսար, գաւառակ պատմական Փոքր Հայքում Թոկատի գավ-ում: Կենտրոնը Նիքսար քաղաքն էր: 20րդ դարու սկզբներին ունէր 28, 576 թուրք, յոյն, հայ բնակիչ»: Չէ յիշուած թէ Նիքսար քաղաքը Թոքադ քաղաքէն որչափ հեռու է եւ նաեւ որ կողմն է, հիւսի՞ս, հարա՞ւ եւայլն: Նիքսար քաղաքին եւ գաւառին հայ բնակչութեան մասին ոչ մէկ տեղեկութիւն: Նիքսար քաղաքը 1914ին ունէր 3,000 իսկ Նիքսար գաւառակը ունէր ինը հայաբնակ գիւղեր մօտ 3,300 բնակչութեամբ: Տես Ա. Ալպոյաճեան «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց», էջ 545:

Նոյն 7րդ էջին վրայ յիշուած է «Նիֆ գիւղ, Բաբերդ քաղաքից 15 քմ. հս-արմ. 20րդ դարու սկզբներին ունէր 53 տուն բնակիչ»: Այս գիւղին անունը Նիվ է եւ ոչ թէ Նիֆ: Պէտք է յիշուէր թէ այս 53 տուները հայու տուներ էին: Տես Հայր Բաբգէն Արսլանեանի «Բաբերդ եւ իր Շրջանակները», էջ 27:

Նոյն հատորին եւ նոյն էջին մէջ կայ հետեւեալը «Նիքերիկ, գիւղ Խարբերդի գաւառում: Հայաբնակ էր: 1895ին բնակիչների մի մասը կոտորուեց, իսկ կենդանի մնացածները բռնութեամբ մահմետականացուեցին»: Տեղեկութիւնները ճիշդ չեն ու պակասաւոր: Այս գիւղին հայկական անունը «Հին Ագարական» էր, եւ Նիքերիկ թրքերէն աղաւաղեալ անունն է: Հայաբնակ էր 225 անձով, մինչեւ 1915, երբ տեղահան եղան դէպի Տէր Զօր եւ ջարդուեցան: Գիւղը ունէր դպրոց եւ Սբ. Մինաս անունով եկեղեցի: Տեսնել «Հայկական Սով. Հանրագիտարան» հատոր 6, էջ 409, Հին Ագարակ յօդուածը, թէեւ չէ յիշուած թէ եկեղեցին կը կոչուէր Սբ. Նշան եւ նաեւ չէ յիշուած թէ ան կը կոչուէր նաեւ Նիքերիկ: Պէտք էր յիշուէր նաեւ որ այս գիւղը կը գտնուի Խարբերդէն տասը քմ. հարաւ արեւելք, եւ 1955էն ի վեր վերանուանուած է Պաղլաճա:

Էջ 78, Շապին Գարահիսար նահանգի յօդուածին մէջ յիշուած է թէ գաւառակը ունէր 49 հայաբնակ աւաններ եւ գիւղեր, ինչպէս Թոմարզան, Կարթանոցը, Մշկանոցը, Մուշկենցը եւայլն: Այս չորս անուններն ալ սխալ են: Թոմարզան պէտք է ըլլայ Թամզարա (Թոմարզան Կեսարիոյ նահանգին մէջն է, Շապի Գարահիսարէն մօտ 300 մղոն հարաւ արեւմուտք), Մշկանոցը պէտք է ըլլայ Մշակնոց, Կարթանոցը՝ Կթանոց, զոր Թուրքերը կը կոչէին Քիրդինոս, եւ ներկայիս վերանուանուած Պեյտեկիրմենը: Իսկ Մուշկենց անունով հայաբնակ գիւղ չի յիշուիր այս գաւառին մէջ, Թուրքերը վերի յիշուած Մշակնոցին՝ Մուշկենիս կը կոչէին: Ներկայիս Մշակնոցը կը կոչուի Պոսթանճքը: Հոս տեղին է ըսել որ այսպիսի բազմահատոր տեղանուններու բառարան մը, երբ կ՚ըսէ թէ Շապին Գարահիսար 49 հայաբնակ աւաններ եւ գիւղեր ունէր 1914ին, շատ փափաքելի է որ ասոնք տրուէին ցանկի ձեւով իրենց բնակչութեամբ, ինչպէս ըրած է Հայր Եփրիկեան, մէկ դար առաջ, իր Բնաշխարհիկ Բառարանին մէջ:

Էջ 143 կը յիշուի Սեբաստիոյ նահանգին մէջ Շնքուռակ կամ Շունքուռակ հայաբնակ գիւղը, բայց չէ ըսուած թէ Սեբաստիոյ նահանգին ո՞րտեղն էր: Սեբաստիոյ նահանգը մօտ 83,000 քառ. քմ. էր այսինքն ներկայ Հայաստանին 3 անգամը: Շնքուռակ կը գտնուի Սեբաստիոյ քաղաքէն 30 քմ. հարաւ արեւմուտք: 1955էն իր վերանուանուած Իսքնեուրդ:

Էջ 613 կը յիշուիր «Սիս գիւղ Շապին Գարահիսարէն մօտ 40 քմ.... 20րդ դարու սկիզբները ունէր 200 տուն հայ եւ թուրք բնակիչ»: Չէ յիշուած թէ Սիս Շապին Գարահիսարին ո՞ր կողմն է: Այս նախկին հայաբնակ գիւղը կը գնուի Շապին Գարահիսարէն 40 քմ. հարաւ արեւմուտք եւ 1955ին վերանուանուած է «Զաթալորուք»: Իսկ բնակչութեան թիւը 1914ին Խ. Գաբիկեան իր «Եղեռնապատում - Փոքուն Հայոց եւ Նորին Մեծի Մայրաքաղաքին Սեբաստիոյ» էջ 602, կու տայ 200 հայ ընտանիք կամ 1,200 անձ: Սարգիս Տէօվլէթեան «Յուշեր Շապին Գարահիսարէն» էջ 31, կու տայ 300 հայ ընտանիք: Արամ Հայկազի «Շապին Գարահիսար ու իր Հերոսամարտը» գիրքին մէջ, էջ 25, բնիկ Շապին Գարահիսարցի Վեցիկեան կու տայ Գաբիկեանի տուած թիւը, իսկ Հայկազ, իր գիրքին 17րդ էջին վրայ ցանկին մէջ կու տայ 120 հայ ընտանիք, կամ մօտաւորապէս 720 անձ:

Էջ 192 կայ հետեւեալը «Զաթախ գիւղ Սեբաստիայի (պէտք է ըլլայ Անքարայի Ս. Գ) Եոզղաթի գաւառակում. 1872-73ին թթ. ունէր 20 հայ տուն բնակիչ: Աւերուեր է 1915ին»: Եոզղաթ գաւառը նորէն փոխադրուած է Անքարայէն Սեբաստիա: Չէ յիշուած թէ Զաթախ ունէր 250 հայ ընտանիք, մօտ 1,500 անձ 1915ին:

Էջ 216ին մէջ կը կարդանք «Զավուրմա, գիւղ Արմ. Հայաստանում, Էրզրումի գաւառում, Խնուս քաղաքից 10 քմ. հարաւ արեւելք: 1915ին Մեծ Եղեռնից առաջ ունէր 180 հայ եւ 4 տուն քիւրդ բնակիչ: Ունէր եկեղեցի, Սբ. Աստուածածին եւ վարժարան: Զավուրմա եղել է Թոնտրակեան շարժումին մեծ կեդրոններից»: Էջ 228ին մէջ կը կարդանք Խնուսի մօտ Զաուրմա անունով զուտ հայաբնակ երկրորդ գիւղի մը մասին, «Խնուսէն 30 քմ. հիւսիս արեւմուտք: 1909ին ունէր 180 տուն հայ, 1915ին 250 տուն հայ բնակիչ: ՈՒնէր եկեղեցի եւ դպրոց: Բնակիչները տեղահան են արուել 1915ին»: Ճիշտ է որ Խնուս երկու գիւղ ունէր Զաւուրմա անունով, բայց ասոնցմէ միայն մէկ հատը հայաբնակ էր: Տես Եղիշէ Մելիքեանի «Հարք-Խնուս» էջ 95, եւ Թէոդիկի «Գողգոթա Հայ Հոգեւորականութեան եւ իր Հօտին Աղետալի 1915 Տարին» էջ 208: Վերը յիշուած առաջին Զավուրմա գիւղը, Խնուս քաղաքին հարաւ արե-

Շար.ը էջ 17



ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

# ԼՈՒՍԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ «Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԻՄՈՒՄ...» ԽՏԱՍԱԼԻԿԸ

*ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ*
*(ԵՐԱԺՇՏԱԳԷՏ)*

Ինծի համար ոչ միայն ուրախութիւն էր, այլ միաժամանակ երջանիկ մխիթարութիւն տեսնել նիւթապաշտական կամ «մամոնայ»ի այս դարուն, առեւտրական շահադիտումներու հետեւանքով, մեր մշակոյթի երաժշտական բնագաւառէն ներս, արուեստի գեղագիտական ճաշակն ու ըմբռնումը կորսնցուցած, եթէ կ՚ուզէք անգամ կրած աշխարհիկութեամբ մը յագեցած (դժբախտ իրողութիւն) մթնոլորտի մէջ ձեռքս կ՚անցնէր երիտասարդ երգահան Լուսինէ Գրիգորեանի «Ի Նեղութեան Իմում...» անուն խտասալիկը:

Ինչո՞ւ արտայայտուիլ այս խտասալիկին մասին:

Անոր համար, որ հրապարակի վրայ գտնուող խտասալիկներէն տարբեր է ան: Տարբեր՝ նկարագրով, ոճով եւ տեսակով:

Ընդամէնը ութը երգեր, որոնց խօսքերը առնուած են Սուրբ Գիրքէն՝ «Հայր Մեր» երգը, Մեսրոպ Մաշտոցի շարականներէն «Ի Նեղութեան իմում...», Սահակ Ձորափորեցիի շարականներէն երկու հայրէններ՝ «Տաղ Կաքաւի»ն եւ «Սրտերգ Աստուածածնայ»ն, Կոմիտաս Վարդապետի բանաստեղծութիւններէն «Աղերս»ը եւ վերջապէս Յովհաննէս Թումանեանի «Գութաներգ»ն ու Ա. Եավրեանի «Օրօրոցային»ը:

Ինչպէս կը տեսնէք, բոլոր երգերուն խօսքերը իրենց նկարագրով կամ եկեղեցական գրականութենէն են եւ կամ ալ հոգեւոր նկարագրով (աշխարհական եւ կրօնական) բանաստեղծութիւններ: Իսկ երգերուն եղանակները բխած ըլլալով այսպիսի խօսքերէ եւ բանաստեղծութիւններէ, անոնք եւս դարձած են այս անգամ հոգեւոր նկարագրով մեղեդիներու փունջ մը:

Լուսինէ Գրիգորեանի ստեղծագործական ներշնչումը կու գայ միջնադարեան մեր հոգեւոր երաժշտութեան ակունքներէն: Այս իսկ պատճառաւ իր երգերուն մէջ վճիտ ջուրի նման առկայ են միջնադարու երաժշտական տարբեր, ինչպէս մեղեդային դարձուածաբանութիւններ, թուիչքներ, կշռութային կիրարկումներ, եւայլն:

Հայկական ձայներու օգտագործման տեսակէտով, թէեւ հոն են անոնք, սակայն շեղումներով ինչպէս «Ի նեղութեան իմում...» գղջական-աղաչական երգը երբ կը հասնի բնագրի հինգերորդ, վեցերորդ եւ եօթներորդ բառերուն՝ «օգնեա ինձ, Տէր»ին, մեղեդին բացի վերջի ձայնահնչիւնէն, որ կիտաւոր ճերմակ է, կ՚ընթանայ ութերորդական ձայնահնչիւններով:

ԳԿ-ի մեղեդիական այս գծին մէջ do-ին բնիկ ձեւով գործածութիւնը, ըստ միջնադարեան երաժշտական տեսութեան, սխալ էր, ընդունելի չէր, որովհետեւ fa կիսվերէն վարի do-ն երեք ամբողջական ձայնամիջոց է (tritone), ինչպէս նաեւ do-էն fa կիսվեր: Երեք ամբողջական հնչածաւալները նկատուած ըլլալով «սատանայական ձայն» անոնց գործածութիւնը արգիլուած էր եկեղեցւոյ երաժշտութենէն ներս: (Թէեւ ԳՋ ձայնին հնչասանդուխին մէջ ունինք tritone-ի գործածութիւնը ինչպէս.

«sol կիսվեր si կիսվար la lá» մեղեդային գիծը:

Ուստի տեսականօրէն աւելի ճիշդ պիտի ըլլար եթէ ԳԿ երգին մէջ գործածուող do-ն ըլլար do կիսվեր: Այսուհանդերձ, սակայն, երեւի հեղինակը do բնիկի գործածութեամբ ուզած է աւելի հնաբոյր հնչեղութեամբ յանգաձեւ մը տալ երաժշտական այդ բանաձեւին:

Գրիգորեանին երգերը, իրենց ծաւալով, կը պատկանին մանրերգերու տեսակին (genre):

Որպէս կառուցուածքի գլխաւոր ոճային յատկանիշ պէտք է մատնանշեմ, որ այս երգերը, առհասարակ կազմուած են մի քանի մեղեդիական փոքրիկ նախադասութիւններու (երբեմն նոյնութեամբ, երբեմն կշռութային տարբերակումներով) կրկնութիւններով: Կրկնութիւններու միջոցաւ հեղինակը իր երգերուն տուած է զգացական տարածք եւ իմացական խորութիւն:

Կրկնելու այս ոճը ընդհանրացած էր վաղ միջնադարուն, ուր գաղափար մը կրկնելով ու կրկնելով ամբողջովին ներծծուելով մարդուս կողմէ, հոգեկան վերացումի վիճակի մէջ փոխադրուելով, գերագոյն ուժին՝ Աստուծոյ հետ յարաբերելու հոգեկան կամուրջներ հաստատած կ՚ըլլար ան: Եւ, Լուսինէ Գրիգորեանի երգերուն ընդհանուր ոգին, շունչն ու մթնոլորտը ըլլալով աղերսական, խնդրողական, զղջական, այլ խօսքով՝ աղօթք առ Աստուած, յաջողած է ան իր ստեղծագործութիւններուն մէջ:




Շնորհաւորելի է Լուսինէ Գրիգորեանը, որ հոգեւոր աղբիւրներէ ներշնչուելով կը յօրինէ երգեր հարստացնելով հոգեւոր երաժշտութեան գանձարանը:

Մաղթելի է որ վարակիչ դառնայ ու ընդհանրանայ այնքան կարիք զգացուող հոգեւոր երգատեսակի զարգացումն ու մշակումը մեր երաժշտութենէն ներս:

Կը մաղթեմ յաջողութիւն եւ նորանոր ստեղծագործութիւններ երիտասարդ երգահան Լուսինէ Գրիգորեանին:





Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
مطعم الشرق
MEDITERRANEAN
LEBANESE FOOD

COME IN AND
ENJOY
OUR PATIO
AND THE
FINEST
SHISA
"HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

BELLY~DANCING

910~E.MAIN ST,ALHAMBRA,CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL( 626 ) 795-4493

## ԱՅԺՄԷԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

# ԱՍՏՈՒԱԾ Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԵՑ ՄԱՐԴԸ

*ՎԱՐԴԱՆ ԱՒ. ՔՀՆՑ. ՏԻՒԼԿԷՐԵԱՆ*

*Կեանքի մէջ, ի՞նչ բանն է բնական, որ մարդ կ'ուզէ ու կը հետապնդէ իր նախասիրութեամբ:*

*Հարցնենք: Ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ ամենէն աւելի փափաքելի, եթէ ոչ իր անհատական ապահովութիւնը եւ երջանկութիւնը:*

*Տրամաբանական չէ՞, որ մտածող մարդը, առանց աջ եւ ձախ թեքելու՝ շիտակ սեւեռամտածումով իր քայլերը ուղղէ դէպի իր կեանքին ու ճակատագրին նախասահմանումը: Միայն այս լարուած ընթացքով կրնայ՝ անմոլար ու անվտանգ ողջունել իր իղձերուն երջանիկ հանգրուանը:*

*Մարդը, որ աշխարհ կու գայ, անշուշտ նպատակ մը ունի եւ բնական է, որ ուզէ իրագործել զայն, յենած իր անհատական ճիգերուն:*

*Հարցնենք կրկին: Կա՞յ մէկը, մարդկային հասարակութեան մէջ, որ չգիտակցի այս իրողութեան ու կեանքին կարճ ու երկար տարիները չ'օգտագործէ այդ նպատակին յաջողութեան համար:*

*Աստուած շնորհեց իր բանաւոր ձեռակերտին անհուն հոգիէն ու իմաստութենէն անսպառ շողեր, որ ազատ ու ինքնիշխան, խթանուած իր ներքին բերումներէն, իրագործէ Աստուածահաճոյ եւ հանրօգուտ նպատակներ: Ընտրէ բոլորին հաճելի՝ լաւը եւ օգտակարը, խուսափելով չարին ու սուտին հպումներէն: Ըլլայ տէրը տիրակալը ամբողջ ստեղծագործութեան: Եւ այս նպատակով՝ օժտեց մարդուն իմացական եւ հոգեկան երկինքը աստեղազարդ շնորհներով, որ ամէն մարդասիրական գործ կատարէ իր բազմաճառագայթ լոյսին մէջ:*

*Աստուած հռչակեց իր շնորհազարդ արարածը արարչագործութեան ԹԱԳԸ, որ գոհողութեան գերագոյն ոգիով սխրագործէ իր հովանաւորութեան ներքեւ, առանց բռնաբարելու իր նմաններուն ազատութիւնը:*

*Պարգեւատու Տէրը, չզրկեց ոչ մէկ մահկանացու երկնային շնորհաբաշխութենէն: Անխտիր ու հաւասարապէս, բարիին ու չարին շնորհեց իր պարգեւները:*

*Ջնայեցաւ անոնց արժանիքներուն, այլ միայն անբասիր բարոյականին, ոչ անոնց ուժին ու տկարութեան, այլ անոնց նկարագրի վսեմութեան:*

*Մարդոց երջանկութեան ու վայելքին համար ստեղծեց լուսապայծառ երկինքը, արեւը, լուսինը, աստղերը, ծովերը եւ ովկիանոսները, գետերը եւ աղբիւրները, ծաղկաւէտ դաշտերը եւ բնութեան տեսարժան վայրերը, ծաղկաստանները, եւ պտղաստանները, անտառները եւ պուրակները, իսկական դրախտի վերածեց երկիրը մարդոց բարւոյն ու բարօրութեան համար:*

*Այս բոլոր անհաւասարելի գեղեցկութիւնները ստեղծեց ՄԻԱՅՆ մարդոց վայելքին համար, որ փառաւորէ Տիեզերակալին ՅԱՒԵՐԺԱԼՈՅՍ ՓԱՌՔԸ:*

*Այս բոլոր անբաւ բարիքներուն փոխարէն՝ ի՞նչ ցոյց կուտայ մարդկային հասարակութիւնը Մարդասէր Աստուծոյ:*

*Հրէշային ապերախտութիւն մը, գեհենային կրակներուն մէջ հրկիզուելու արժանի:*

*Գիշեր եւ ցերեկ, երկրէն ու երկինքէն, կարկուտի պէս կը տեղան հրթիռներ անմեղ մարդոց կեանքին վրայ, թաղելով աւերակոյտերու ներքեւ երեխաներ, մանուկներ, երիտասարդներ, հայրեր ու մայրեր, ամէնքն ալ գարունամեայ տարիքով: Կարծես թէ վրիժառութեան թիրախ ըլլար երկրի ու երկնքի մարդասէր Արարիչը:*

*Ոչ մէկ ժամանակ, նախաքրիստոնէական դարաշրջաններուն, այսպիսի եղեռնագործութիւն պատահած չէ, որոնք այս վերջին քանի մը դարաշրջաններուն, որ քրիստոնէական կը կոչուի:*

***

*Մեր Յաւիտենական Հայրը, որ ի բնէ սէր է, աշխարհը եւ մարդկութիւնը ստեղծեց յատուկ գուրգուրանքով ու պատուեց մարդը, երկրի ու երկնքի կեանքով, յիմարութիւն պիտի ըլլար ակնկալել, որ Տէրը բանար արքայութեան դարպասները եւ իր հովանաւորութեան ներքեւ ընդունէր երկրէն քաղաքացի մը, որպէս երկնաքաղաքացի:*

*Ի՞նչ է ներկայիս աշխարհի դժնետեսիլ համապատկերը, որ ծուխ ու վառօդ կը հոտի եւ ի՞նչ է կերպարը մարդուն, որ ներքուստ եւ արտաքուստ, սատանան կը բարացուցէ իր դիւային յատկանիշներով:*

*Անորակելի քաոս եւ անորակելի բարբարոսութիւն:*

*Ո՞վ կ'երեւակայէր, որ երրորդ հազարամեակի արշալոյսին՝ մարդը սատանայէն աւելի պիտի չարանար եւ մարդկային հասարակութիւնը պիտի վերածէր քաոսի:*

*Խաչուած ու նահատակ Լիբանան, այս քանի անգամ է, որ աշխարհի ճիւաղները, տկար ու անզօր մարմինդ կը խոշտանգեն եւ փոքր ածուդ կը հրդեհեն:*

*Ի՞նչպէս պիտի վերականգնես փոշիացած աւերակներէն աննման երկիրդ: Ո՞վ Աստուծմէ զատ կարող է զօրակցիլ ճիգերուդ եւ վերակենդանացնել կեանքդ, խաղաղ օրերուդ փառքովը:*

*Մարդաջինջ գիտութիւնը չարափոխեց աշխարհը եւ համառօտեց այս շնչաւոր մոլորակին գոյութեան տեւողութիւնը:*

*Ջնջեց մարդկային հոգիէն աստուածային շնորհազարդ նմանութիւնը եւ դարձուց Աստուծոյ հրաշակերտ արարածը մացառուտի յօշոտիչ գազան մը:*

*Այսօր բոլոր դպրոցները, բարձրագոյն ուսումնարանները դարձած են ոճրաբոյր անառականոցներ եւ բարոյական նեխութիւն կը հոտին:*

*Ատոնց մէջ կը դարբնուին, ոչ թէ վաղուան սերունդներու յոյսերը եւ խոստումները այլ ապագայ մարդասպանները եւ ցեղասպանները:*

*Մարդը դադրած է մարդ ըլլալէ եւ դարձած է անխիղճ ու անհոգի մեքենայ մը:*

*Մեքենան սնակացուց Աստուծոյ բանաւոր արարածը իր երկնաշնորհ օժիտներէն եւ դարձուց իր ծառան:*

*Ներկայիս, մարդը եւ մեքենան համերաշխօրէն կը գործեն իրարու ծառայելով եւ զիրար փոխարինելով:*

*Գիտութիւնը մարդուն մէջ սառեցուց բոլոր բարոյական արժանիքները ու սիրտը վերածեց անբեկանելի սառնակոյտի:*

*Սակաւաթիւ սրբակեց հոգիներ կը տեսնեն միայն առաքինութեան արեւաշող գագաթներու վրայ: Մարդկային մեծամասնութիւնը բարոյապէս բորոտած, իջած է երկրի ընդերքներէն ցած, գեհենի յատակը:*

*Մեր բարեգութ Հայրը, ի՜նչ սուրբ տենչեր եւ ի՜նչ ճառագայթող մտածումներ դրաւ մեր հոգիին անծիր տարածքներուն վրայ, որ թողունք երկրի քաղաքացիութիւնը եւ ընդունինք երկնաքաղաքացիութիւնը:*

*Դժբախտաբար, ներկայիս ամէն նուիրագործուած արժէք կը յոռեշրջուի ու իր տեղը կ'առնէ արտառոց մօտան:*

*Աստուած ազատեց մարդը երկրի մեղքին կապանքներէն եւ պատուեց ու յարգեց իր ազատութիւնը:*

*Այսօր ամէն փոփոխութիւն, որ ժամանակի բռնատիրութեամբ կը կատարուի, բարոյապէս կը մրոտէ մարդուն կեանքին որակը ու վարկը:*

*Չկայ դպրոց մը, որ նորահաս սերունդը իր ծրագրով առաջնորդէ դէպի առաքինութիւն եւ հոգեւոր կեանք:*

*Չկայ եկեղեցի մը, որ անբիծ հոգիով՝ Աստուծոյ սէրը հաղորդէ բարեպաշտ հոգիներուն՝ երկնային շողերով:*

*Չկայ կազմակերպութիւն մը, որ մոլեռանդութեան որոմը չներմուծէ մատղաշ հոգիներու մէջ:*

*Ամէն ինչ որ չարաշահութիւն է կը յառաջդիմէ եւ ամէն ինչ որ առաքինութիւն է քառասմբակ կը յետադիմէ: Խաբէութիւնը եւ սուտը կ'իշխեն առեւտրական աշխարհին մէջ, անկեղծութիւնը եւ շողոքորթութիւնը կը պաշարեն մարդը, ամօթը եւ մերկութիւնը կը լրբանան ու շահատակութեան թիրախ կը դառնայ հարուստին ու միամիտ մարդուն կեանքը:*

*Եթէ կ'ուզես իրապաշտ ըլլալ, մի նետուիր ամպերէն վեր, որ յետոյ գահավիժիս եւ պարապութեան մէջ օրօրուիս ու ողբաս վիճակիդ վրայ:*

*Եթէ փիլիսոփայութիւնդ նիւթապաշտութիւնն է եւ նպատակդ հարստանալ՝ չես հասնիր յագեցումի հանգրուանին: Ծերութեանդ մայրամուտի ստուերներուն մէջ չարաշահութենէ հիւծած կը չուես կեանքէն եւ կուտակած դրամի դէզերը կ'անցնին այնպիսի մարդոց ձեռքը, որոնց փէնի մը անգամ պիտի չ'ուզէիր ժառանգ թողուլ:*

*Նիւթապաշտին համար կեանքը կեանք չէ, այլ համագիշերային ու համացերեկային մղձաւանջ եւ անձկութիւն:*

*Գողը իր ստորին արհեստով կը կողոպտէ հասարակութիւնը եւ ընչաքաղցը ագահութեամբ կ'անիրաւէ աղքատութիւնը:*

*Ամուսնութեան թեկնածուն՝ չի նայիր, ո՞վ է այն երիտասարդը կամ երիտասարդուհին, որուն պիտի կապէ իր ամբողջ կեանքը, այլ կ'ուզէ վստահ ըլլալ, թէ ո՞րքան պարարտ է իր դրամապանակը:*

*Երբ մարդուն սիրտը նիւթապաշտութենէ կը գերուի, ալ՝ իր բնութեան մէջ, ամէն տարր կը գործէ ժխտական արտայայտութիւններով:*

*Հոգիին բացակայութիւնը մարդկային կեանքէն, կը վերակենդանացնէ իր մէջ անգուսպ գազանը, որ անպարտելի է:*

*Ժողովրդային իմաստութիւնը կ'ըսէ -ԱՆՈՆՔ ՈՐ ԱՆՊԱՏԻԺ ԿԸ ԹՈՂՈՒՆ ՉԱՐԵՐԸ, Կ'ԱՆԻՐԱՒԵՆ ԲԱՐԻՆԵՐԸ:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԵՆԹԱ)
ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՋ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ»

*Շարունակուած էջ 14-էն*

*ուելքը, հայաբնակ Ջավուրման էր: Թէոդիկ կը յիշէ թէ այս գիւղը ունէր Սբ. Աստուածածին եկեղեցի:*

*Էջ 259, կայ Չմշկածագի մասին յօդուած ուր կ՚ըսուի թէ Չմշկածագ գիւղաքաղաքը 1915ին ունէր 6,500 հայ բնակիչ: Այս չափազանցուած է: Ըստ Համբարձում Գասպարեանի «Չմշկածագ եւ Իր Գիւղերը» (Պոսթոն Պայքար տպ. 1969) գիրքին, էջ 90, Չմշկածագ քաղաքը 1915ին ունէր միայն 350 հայ ընտանիք, որ կ՚ընէ մօտ 2,190 անձ: Տեղանուններու յօդուածը անշուշտ չի յիշեր Գասպարեանի գիրքը:*

*Էջ 262 կը կարդանք «Չնքուշ, Շունքուշ. Գւղ, գիւղաքաղաք, աւան, քաղաք Արմ. Հայաստանի Դիարպեքիր գաւառում... Ամերիկայի Չնքուշցիները հրատարակեցին Տովառ (Շիքակօ) 1927-33 եւ Նոր Չնքուշ (Նիւ Եորք) 1931-35 թերթերը: Մի քանի նկատողութիւններ մեր կողմէ: Ջեմ կարծեր թէ Չնքուշ նաեւ կը կոչուէր Շունքուշ: Երկրորդ նկատողութիւն, վերը գրուած է թէ Չնքուշ գիւղ, գիւղաքաղաք, աւան, քղաք մըն է: Ինչ կը նշանակէ այս, թէ գիւղ թէ գիւղաքաղաք եւ թէ քաղա՞ք: Այս տարօրինակութիւնը կը գտնենք Տեղանուններու Բառարանին բոլոր հատորներուն մէջ: Երրորդ կէտ մը: Յիշուած է Ամերիկայի մէջ հրատարակուած թերթերու անունները, բայց չէ յիշուած Գառնիկ Գէորգեանի «Չնքուշապատում»ը, 1, 020 էջնոց հատորը, տպրուած Երուսաղէմ 1970ին:*

*Էջ 453, կայ «Սաաթլը, գիւղ Սեբաստիոյ նահանգի Յոզղաթի գաւառում: 1872ին ունէր 275 (30 տուն) հայ բնակիչ»: Սխալ եւ թերի է տեղադրումը: Եոզղաթ գաւառը Անքարայի եւ ոչ թէ Սեբաստիոյ նահանգին մէջն էր: Սաաթլը գիւղը Յոզղաթ քաղաքէն 20 քիլոմեթր հարաւ արեւելք է, ծանօթութիւն մը որ պէտք էր տրուէր Բառարանին մէջ եւ չէ տրուած: Ուրիշ կարեւոր պակաս մը: Տրուած է միայն 1872ի հայ բնակչութեան թիւը, բայց ոչ 20րդ դարու թիւը: 1914ին այս գիւղը ունէր 160 հայաբնակ տուն, մօտ 1,100 անձ: (Տես. Նուրձիա Փիլիպոսեան եւ Աւետիս Քէստէքեան, «Յուշարձան Եոզղատցիներու» էջ 34):*

*Էջ 500 յիշուած է Սաչլը գիւղը Եոզղաթի նահանգին մէջ եւ գրուած է թէ 1872ին ունէր 30-40 տուն հայ բնակիչ: Ոչ մէկ տեղեկութիւն տրուած է թէ Եոզղաթի նահանգին մէջ ո՞ւր կը գտնուի այս գիւղը, նաեւ չէ տրուած հայութեան թիւը 1914ին: Սաչլը կը գտնուի վերը յիշուած Սաաթլը գիւղէն երեք քմ. հիւսիս արեւմուտք եւ 1914ին ունէր 110 հայ ընտանիք, մօտ 700 հոգի:*

*Էջ 479 յիշուած է Սահակ գիւղը, Մուշի գաւառին մէջ, որ ունէր 240 հայ բնակիչ 1882ին: Չէ յիշուած թէ 1914ին տակաւին հայաբնակ էր, (Տես Սարգիս եւ Միսակ Բղէյեան, «Հարազատ Պատմութիւն Տարօնոյ» էջ 48):*

*Էջ 602 յիշուած է Սիլվան հայաբնակ գիւղը Սեբաստիոյ նահանգին մէջ: Սեբաստիոյ մասին գրուած գիրքերուն մէջ Սիլվան անունով հայաբնակ տեղ չի յիշուիր:*

*Էջ 645 յիշուած է Տրապիզոն նահանգի Սիւրմենէ քաղաքը, եւ գրուած է թէ 1872ին ունէր 37 տուն հայ որոնք 1895ին եւ 1915ին աքսորուեր են կամ ջարդուեր են: Չէ յիշուած հայ բնակչութեան թիւը 1914ին: Թէոդիկ, «Գողգոթա» էջ 450 կու տայ 200 հայ 1915ին:*

*Այս չորրորդ եւ հինգերորդ հատորներուն մէջ, 1914ին Արեւմտեան Հայաստանի - այսինքն Թուրքիոյ մէջ - չյիշուած Հայաբնակ քաղաքներուն ու մանաւանդ գիւղերուն ցանկը բաւական երկար է:*

*Կու տանք միայն կրճատուած ցանկ մը չյիշուած տեղերու:*

*1. Անգարայի նահանգէն (ա) Ստանոզ քաղաքը որ ունէր 6,000 հայ բնակչութիւն Տես. Ալիս Օտեան-Գասպարեանի «Պատմագիրք Անկիւրիոյ եւ Ստանոզի Հայոց» էջ 20: (բ) Զաթ Փոքր գիւղը, որ ունէր 150 տուն հայ ընտանիքը 1915ին, Եոզղաթի գաւառին մէջ:*

*2. Պիթլիս նահանգ, Սասունի Խոյթ-Բռնաշէնէն Օշակ գիւղը:*

*3. Պուրսա նահանգէն, չէ յիշուած Սիվրի Հիսար քաղաքը որ ունէր մօտ 10,000 հայութիւն: (Տես Գիրգոր Տէր Յովհաննէսեանի «Պատմագիրք Սիվրի-Հիսարի»:*

*4. Իզմիտ նահանգէն, չեն յիշուած Սապանճա եւ Սապանճա Նոր գիւղերը:*

*5. Մալաթիոյ Պէհէսնի գաւառակէն Օշինկա գիւղը, Կէրկէր գաւառէն Նոխուտլու գիւղը:*

*6. Վանի նահանգէն, Հայոց Ձորի Սահակ գիւղը, Արճէշի Տատալու գիւղը:*

*Ե. ՀԱՏՈՐ*

*Էջ 80 կայ յօդուած «Սեբաստիոյ նահանգի Տեվրիկ քաղաքի մասին»: Տեվրիկ անունը սխալ է, ճիշտը Տիվրիկ է: Տես Ե. Զարդարեանի «Պատմագիրք Տիվրիկ քաղաքի» Պէյրութ 1972):*

*Էջ 506 գրուած է «Օրուլ գիւղ Մարաշի գաւառում, Այնթապի գաւառակում Այնթապ քաղաքից 26-27 քմ. հեռաւորութեամբ, Հռոմկլայի ճանապարհի վրայ... 1863ին ունէր 200 տուն հայ բնակիչ»: Թերի են տրուած տեղեկութիւնները: Այնթապ գաւառակը Մարաշ գաւառին մաս չէր կազմեր: Օրուլ գիւղին ուր ըլլալը գտնալու համար, ընթերցողը նախ Հռոմկլա քաղաքին ուր ըլլալը պէտք է փնտռէ: Շատ աւելի լաւ պիտի ըլլար եթէ ըսուէր թէ Օրուլ կը գնուի Այնթապէն 26 քմ. հարաւ արեւելք: Հռոմկլան Հիւսիս Արեւելք է: Օրուլի բնակչութիւնը միայն 1863ինը տրուած է: 1914ին Օրուլ ունէր 65 տուն (715 անձ) հայ:*

*Էջ 515 կայ «Ֆաքրալի գիւղ Սեբաստիոյ Եոզղաթ գավ-ում: 1885ին ունէր 30 տուն 180 հայ բնակիչ»: Տեղեկութիւնները թերի են: Եոզղաթ Անքարայի նահանգին մէջն է: Ոչ մէկ տեղեկութիւն գիւղին ուր ըլլալուն մասին եւ հայ բնակչութեան թիւին մասին 1914ին: Ֆաքրալին Եոզղաթ քաղաքէն 39 քմ. հարաւ արեւմուտք է եւ 1914ին ունէր 150 հայերու տուն, մօտ 1,000 հայ բնակիչ:*

*Էջ 518 գրուած է «Ֆեքէ» Վահկա, գիւղաքաղաք Կիլիկիայում, Սիս քաղաքից 50 քմ. հիւսիս արեւմուտք: Ունէր 300 հայ եւ թուրք բնակիչ 19րդ արու վերջերին»: Թէ տեղադրումը եւ թէ բնակչութեան թիւը սխալ են: Վահկան Սիսէն 50 քմ. հիւսիս արեւելք է, եւ 1914ին ունէր 3,000 հայ բնակիչ, մօտաւորապէս 500 հայ ընտանիք: (Տես. Յ. Պօղոսեան «Հաճընի Ընդհանուր Պատմութիւն եւ Շրջակայ Գօզան Տաղի Հայ Գիւղերը» էջ 37): Ճիշդ տեղադրումին համար տեսնել Հ. Սովետ. Հանրագիտարանի 5րդ հատորին, էջ 474ի, «Կիլիկիայի Հայկական Պետութեան Քարտէսը»: Վահկան պատմականօրէն եղած է հայկական յայտնի քաղաք, ըլլալով մայրաքաղաքը Հայկական Կիլիկիոյ 12րդ դարուն: Հայկական պետութեան անկումէն յետոյ 1375ին, Վահկան մնացած է Աջապահեաններու գերդաստանին ձեռքը մինչեւ 19րդ դար: 1955ին Վահկան վերանուանուած է Ասմաճա:*

*Կը յուսամ թէ Տեղանուններու Բառարանին խմբագրական կազմը նկատի կ՚առնէ այս գրութեանս մէջ յիշուած նկատողութիւնները:*

# ԻՐԱՔԵԱՆ ՏԱԳՆԱՊԻ «79» ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*քի այսօրուայ կառավարութիւնը, Շիի համայնքի տիրապետութեամբ, դժուար թէ կարենայ քաղաքական հաշտութիւն կնքել սիւննիներու եւ քիւրտերու միջեւ, նոյնիսկ եթէ մոռնանք Ալ-Քայիտայի ներկայութիւնը: Ուրեմն, յանձնախումբի այս առաջարկութիւնը ի յառաջագունէ դատապարտուած է ձախողութեան: Սատտամ Հիւսէյն, սիւննի բռնատէրը, «յաջողած» էր Իրաքը խաղաղ պահել, պարզապէս բռնութեամբ եւ քաղաքական անմարդկային ճնշումներով:*

***ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳԵՏՆԻ ՎՐԱՅ,** յանձնախումբը նաեւ կ՚առաջարկէ ուղղակի բանակցութիւններ սկսիլ շրջանի երկու երկիրներու հետ, Իրանի եւ Սուրիոյ հետ, որոնք նաեւ թշնամական կեցուածք ունին Ամերիկայի նկատմամբ: Անոնք, երկուքն ալ, սահմանամերձ են Իրաքի, եւ շատ ալ շահագրգռուած չեն այդ երկրէն ներս խաղաղութեան հաստատումով: Ընդհակառակը, անոնք շահագրգռուած են միայն Ամերիկայի պարտութեամբ, եւ ամէն ինչ կ՚ընեն Ամերիկան վարկաբեկելու համար: Այս պարագան հասկնալի է թէ քաղաքականօրէն եւ թէ հոգեբանօրէն: Ցարդ Ամերիկա այս երկու երկիրները կը նկատէ միջազգային ահաբեկչութեան ղեկավար երկիրներ եւ այսօր անկարելի կը թուի որ «Հոգին Սուրբը» իջնէ անոնց վրայ, եւ անոնք տրամադրուին Ամերիկային օգնելու, իրաքեան թնճուկը լուծելու համար: Այս առաջարկը եւս, գէթ ներկայիս յաջողութեան նուազագոյն կարելիութիւնը չունի: Նոյնիսկ եթէ այդ երկիրները «տրամադիր» ըլլան Ամերիկայի երկախօսութեան, նոյնինքն Պուշ իր «Թքածը լզելով» կամ հեղինակութեան լուրջ հարուած ընդունելով, տրամադիր ըլլայ անոնց հետ բանակցելու: Իսկ ի՞նչ կը նշանակէ բանակցիլ - արդեօք Իրաքը տրամադիր կ՚ըլլա՞յ իր օգնութիւնը գլանալու Իրաքի շիի համայնքին, որուն յաղթանակը առ այժմ արդէն իսկ ապահով կը թուի: Անդին պէտք չէ մոռնալ որ այսօր Իրան շրջանային ամենազօրաւոր տէրութիւնն է, Իրաքէն մինչեւ Լիբանան, իր «Հըզպալլահ»ներու միջոցաւ, եւ հարց է թէ Իրան ինչո՞ւ պէտք է վերանայի իր քաղաքականութիւնը:*

### *ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՅԺԵՐՈՒ ՏՈՒՆԴԱՐՁԸ*

*Յանձնախումբը կը յուսայ որ առաջարկուած շրջանային նոր դիւանագիտութեան յաջողելու պարագային, ինչ որ կասկածելի է, ամերիկեան ույժերը կրնան տուն դառնալ 2008 թուականի սկիզբը: Այս կարենալ ընելու համար, ամերիկեան ույժերը նոր առաքելութեան պէտք է ձեռնարկեն, որ կը նշանակէ պատերազմական գործողութեանց ուղղակի մասնակցելու փոխարէն, անոնք ստանձնեն իրաքեան բանակի զօրացման, ձգելով որ ան կարենայ վերջ մը դնել հատուածական (sectarian) նկատուած բախումներու: Այսօր, փաստօրէն, իրաքեան «դեմոկրատական» կառավարութեան իշխանութիւնը, որ 6 ամիսներէ ի վեր, հրապարակի վրայ կը գտնուի, անկարող եղած է տարածելու իր իշխանութիւնը երկրի վրայ, թէ քաղաքական եւ թէ պատերազմական իմաստներով: Արդեօք միամտութիւն չէ Ամերիկայի կողմէ, ենթադրել որ մէկ տարուայ մէջ, կարելի պիտի ըլլայ իրաքեան զօրաւոր կեդրոնական բանակ մը ստեղծել, մանաւանդ որ այդ «բանակ» կոչուածը ենթակայ կը մնայ հատուածական շրջանակներու: Պուշ-Մալիքի հանդիպումները կրնան շատ անկեղծ ըլլալ, սակայն քաղաքական իրականութիւնը բոլորովին տարբեր է ուրեմն այս առաջարկը եւս, գէթ առ այժմ կը մնայ անիրագործելի:*

### *ՊԱՂԵՍՏԻՆ-ԻՍՐԱՅԷԼ ՀԱՐՑ*

*Յանձնախումբը իր առաջարկութիւններու մէջ, քովնտի կերպով, նաեւ Ամերիկեան իշխանութեան կը թելադրէ աւելի աշխոյժ եւ գործնական միջամտութիւն, արաբպաղեստինեան եւ իսրայէլեան տասնամեակներէ ի վեր շարունակուող տագնապի մէջ: Շիտակ է որ Պուշ կը խօսի երկու երկիրներու, Պաղեստինի եւ Իսրայէլի հաստատման, եւ սակայն, ցարդ անկարող եղած է յաջողութիւն արձանագրելու: Պատճառը այն է որ Ամերիկան ցարդ անկարող եղած է արդար, եւ հաւասարակշռուած քաղաքականութիւն մը վարելու, քանի որ կեցած է որոշապէս Իսրայէլի կողքին: Արդ, հարց է թէ Ամերիկա երբեւիցէ պիտի կարողանա՞յ անաչառ կեցուածք որդեգրելու պաղեստինեան հարցի նկատմամբ, եւ պարտադրելու իր պաշտպանեալ Իսրայէլին, վազ անցնելու իր անզիջող վերաբերմունքէն, պաղեստինեան արդար դատին նկատմամբ: Եթէ անցեալը ի մտի ունենանք, Իսրայէլ երբեւէ ալ տրամադիր չէ եղած իսկական լուծում փնտռելու պաղեստինեան հարցին եւ հաստատ մնացած է իր գրաւողի դիրքին մէջ: Ուրեմն Յանձնախումբի այս առաջարկն ալ առ այժմ, կը մնայ անիրականալի:*

### *ԿԱՐԵՒՈՐ ԿԱՐԾԻՔ, ԻՐԱՔԵԱՆ ԿՈՂՄԷ*

*Դժուար է այս յօդուածի մէջ, ներառնել բազմաթիւ կարծիքներ՝ Պէյքըր-Հեմիլթըն Յանձնախումբի առաջարկութեանց վերաբերեալ: Մէկ հատը սակայն կարեւոր կը գտնենք, այս ալ Իրաքի քիւրտ Նախագահ Ճալալ Թալապանիի կարծիքը, ըստ որու «շատ վտանգաւոր» կը նկատէ զանոնք: Պատճա՞ռը, անոնք կը տկարացնեն Իրաքի «գերիշխանութիւն»ը, քանի որ այդ առաջարկներէն մէկը կը խօսի «ներումի» մը մասին, ուղղուած Ս. Հիւսէյնի իշխանութեան նախկին պաշտօնեաներուն եւ բանակայիններուն: Այլ խօսքով «Պաաս» կուսակցութեան անդամներուն ուղղուած ներումի մը մասին: Ըստ երեւոյթին, քիչ մնացած է որ Յանձնախումբը առաջարկէ Սատտամ Հիւսէյնը կրկին պաշտօնի վերադարձնելու մասին...*

*Յանձնախումբի կարեւոր անդամ, Լի Հեմիլթընը, խօսելով իրենց առաջարկութեանց մասին, կ՚ըսէ թէ «Ի՞նչ յաղթանակի մասին կը խօսինք այսօր»:*

*Յիրաւի, Պուշ ի՞նչ յաղթանակի մասին կը խօսի...*

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ՀԱՅ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԼԱՒ ԴՐՍԵՒՈՐԵՑԻՆ



*Երեւանի «Տիտան» մարզասրահում աւարտուեց հայկական բռնցքամարտի երախտաւորներից մեկի՝ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակաւոր գործիչ, ԽՍՀՄ վաստակաւոր մարզիչ Էդուարդ Արիստակեսեանի յուշամրցաշարը, որը միջազգային բնոյթ էր կրում: Բացի Հայաստանի բռնցքամարտիկներից, յաղթողի կոչման համար ռինկ էին դուրս եկել Ռուսաստանի 2, Ջեխիայի 4 եւ Վրաստանի 15 բռնցքամարտիկներ: Ընդհանուր առմամբ քաշային 11 կարգում մրցավէճի բռնուեցին 76 բռնցքամարտիկներ: Մրցաշարում բաւական հաջող ելոյթներ ունեցան հայ բռնցքամարտիկները, որոնցից 8-ը կանգնեցին պատուո պատուանդանի ամենավերին աստիճանին: Եզրափակիչ մենամարտերում մրցակիցներին յաղթեցին Յովհաննէս Դանիելեանը (48 կգ), Վաչագան Ավագեանը (51 կգ), Մկրտիչ Նիկոլեանը (54 կգ), Գաբրիէլ Թոլմաջեանը (57 կգ), Արա Փուլուզեանը (60 կգ), մեր անուանի նախկին բռնցքամարտիկ Սամսոն Խաչատրեանի որդին՝ Արթուրը (75 կգ) եւ Յոլակ Անանիկեանը (91 կգ): Ընդորում՝ վերջինիս առաւելութիւնը մրցակցի նկատմամբ բացայայտ էր եւ մրցավարը ժամկէտից շուտ դադարեցրեց մենամարտը:*

*Քաշային երեք կարգերում լաւագոյնը մրցաշարի հիւրերն էին: Մինչեւ 64 եւ մինչեւ 69 կգ քաշային կարգերում մրցաշարի յաղթողներ դարձան Լեւան Գվամիչավան եւ Կախաբեր Ժվանիան, իսկ գերծանրքաշային կարգում ուժեղագոյնը չեխ բռնցքամարտիկ Ստանիսլավ Բարտակն էր:*

*Ընդհանուր առմամբ մասնագէտները եւ մրցաշարի հիւրերը գոհ էին արդիւնքներից: Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Ռաֆայէլ Մեհրաբեանն էլ նշեց, որ կան խոստումնալից, հեռանկարային երիտասարդ բռնցքամարտիկներ, որոնց կարելի է փորձարկել միւս տարի կայանալիք միջազգային մրցաշարերում: Եվ քանի որ յաջորդ մրցաշրջանը նախաօլիմպիական է, ուստի հաւաքականի առաջնահերթ խնդիրն օլիմպիական վարկանիշ ձեռք բերելն է:*

### ՇԱԽՄԱՏ

### ՓԱՇԻԿԵԱՆԸ 3-ՐԴՆ Է ՍԱՐԱՏՈՎՈՒՄ

*Հայ շախմատիստ Արման Փաշիկեանը Սարատովում աւարտուած միջազգային մրցաշարում 9 հնարաւոր միաւորից վաստակելով 6.5 միաւոր գրաւել է 3-րդ հորիզոնականը:*

*7-ական միաւորով մրցաշարի յաղթողներ են դարձել Ռուսաստանի ներկայացուցիչներ Սավչենկոն եւ Ջերնիշովը: Մրցաշարին մասնակցել է նաեւ մեր լաւագոյն շախմատիստներից մէկը՝ Գաբրիէլ Սարգսեանը, որը սակայն վաստակել է ընդամէնը 5.5 միաւոր:*


## ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

*Յունուար 21, 2007*
*Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի*
*նախկին Սաներու Միութեան կողմէ*



# Palm Springs

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**



Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

*Մանրամասների համար հեռաձայնել՝*

**(818) 246-0125**


## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

### *ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Մանչեսթըր Եուն. - Մանչեսթըր Սիթի | 3-1 | Լիվըրփուլ - Ֆուլհամ | 4-0 |
| Թոթենհամ - Չարլթըն | 5-1 | Ուաթֆորտ - Ռիտինկ | 0-0 |
| Փորթսմութ - Էվըրթըն | 2-0 | Միտըլզպորօ - Ուիկան Աթլ. | 1-1 |
| Պլէքպըրն - Նիւքէսըլ | 1-3 | Պոլթըն - Ուէսթ Համ | 4-0 |
| | | Չելսի - Արսենալ | 1-1 |
| | | Շեֆիլտ Եուն. - Ասթոն Վիլլա | 2-2 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մանչեսթըր Եունայթըտ | 17 | 14 | 2 | 1 | 38-9 | 44 |
| Չելսի | 16 | 11 | 3 | 2 | 26-9 | 36 |
| Փորթսմութ | 17 | 8 | 4 | 5 | 23-14 | 28 |
| Լիվըրփուլ | 17 | 8 | 4 | 5 | 23-15 | 28 |
| Պոլթըն | 17 | 8 | 3 | 6 | 19-15 | 27 |
| Արսենալ | 16 | 7 | 5 | 4 | 26-13 | 26 |
| Ռիտինկ | 17 | 8 | 2 | 7 | 19-21 | 26 |

### *ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Գերմանիոյկրմանիոյ ֆութպոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Պ. Լիվըրքուզըն - Հերթա Պերլին | 2-1 | Համպուրկ - Նիւրեմպըրկ | 0-0 |
| Այնթ. Ֆրանքֆորթ - Վարտըր Պրէյմըն | 2-6 | Մէօնշընկլատպախ - ՖՍՎ Մայնց | 1-1 |
| Շթութկարթ - ՎՖԼ Պոխում | 1-0 | Պայերն Միւնիխ - Քոթպիւս | 2-1 |
| Հանովըր-96 - Արմ. Պիլըֆէլտ | 1-1 | Վոլսպուրկ - Աախըն | 1-2 |
| | | Շալքէ - Տորթմունտ | 3-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վարտըր Պրէյմըն | 16 | 10 | 3 | 3 | 45-21 | 33 |
| Շալքէ-04 | 16 | 10 | 3 | 3 | 28-17 | 33 |
| Շթութկարթ | 16 | 9 | 4 | 3 | 28-19 | 31 |
| Պայէրն Միւնիխ | 16 | 9 | 3 | 4 | 26-19 | 30 |
| Հերթա Պերլին | 16 | 6 | 6 | 4 | 27-24 | 24 |
| Արմինիա Պիլըֆէլտ | 16 | 5 | 7 | 4 | 23-18 | 22 |
| Պ. Լիվըրքուզը | 16 | 6 | 4 | 6 | 26-23 | 22 |

### *ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Ռեճինա - Ասքոլի | 2-1 | Աթալանթա - Մեսինա | 3-2 |
| Փալերմօ - Լիվորնօ | 3-0 | Քաթանիա - Ուտինեզէ | 1-0 |
| Քալիարի - Փարմա | 0-0 | Սամտորիա - Սիենա | 0-0 |
| Էմփոլի - Ինթէր Միլան | 0-3 | Քիեւօ - Ֆիորենթինա | 0-1 |
| Ա. Սէ. Միլան - Թորինօ | 0-0 | Լացիօ - Ա. Էս. Ռոմա | 3-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինթէր Միլան | 15 | 12 | 3 | 0 | 32-14 | 39 |
| Ա. Էս. Ռոմա | 15 | 10 | 2 | 3 | 32-14 | 32 |
| Փալերմօ | 15 | 10 | 1 | 4 | 30-18 | 31 |
| Լացիօ | 15 | 7 | 3 | 5 | 25-13 | 24 |
| Քաթանիա | 15 | 6 | 4 | 4 | 21-26 | 23 |
| Աթալանթա | 15 | 5 | 5 | 5 | 24-24 | 20 |
| Լիվորնօ | 15 | 5 | 5 | 5 | 15-18 | 20 |

### *ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Թուլուզ - Լանս | 0-1 | Վալանսիէ - Սոշօ | 0-0 |
| Թրուա - Օքսէռ | 3-3 | Մարսէյլ - Մոնաքօ | 2-1 |
| Նիս - Նանսի | 0-0 | Պորտօ - Րընէ | 1-2 |
| Լօրիան - Սըտան | 2-0 | Լիլ - Սէնթ Էթիէն | 2-2 |
| Նանթ - Լը Մանս | 0-0 | Լիոն - Փարիզ Սէն Ժերմէն | 3-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լիոն | 17 | 15 | 1 | 1 | 35-11 | 46 |
| Լանս | 17 | 9 | 6 | 3 | 26-15 | 32 |
| Լիլ | 17 | 8 | 6 | 3 | 26-16 | 30 |
| Սոշօ | 17 | 8 | 6 | 3 | 21-16 | 30 |
| Սէնթ Էթիէն | 17 | 8 | 4 | 5 | 27-21 | 28 |
| Մարսէյլ | 17 | 8 | 3 | 6 | 23-16 | 27 |
| Նանսի | 17 | 7 | 5 | 5 | 14-13 | 26 |

### *ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Պարսելոնա - Ռէալ Սոսիէտ | 1-0 | Աթլեթ. Մատրիտ - Էսփանիոլ | 1-2 |
| Սեւիլլա - Ռէալ Մատրիտ | 2-1 | Օսասունա - Մայորքա | 3-0 |
| Սելթա Վիկօ - Վիլզարէալ | 1-1 | Կեթաֆէ - Ռէալ Պեթիս | 1-1 |
| Կիմնասթիք - Լեվանթէ | 2-1 | Աթլեթ. Պիլպաօ - Հուէլվա | 4-2 |
| Ռասինկ - Սարակոսա | 0-2 | Վալենսիա - Տեփ. Քորունա | 4-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պարսելոնա | 14 | 10 | 3 | 1 | 33-11 | 33 |
| Սեւիլլա | 14 | 10 | 1 | 3 | 28-14 | 31 |
| Ռէալ Մատրիտ | 14 | 9 | 2 | 3 | 25-10 | 29 |
| Սարակոսա | 14 | 8 | 2 | 4 | 28-17 | 26 |
| Աթլեթ. Մատրիտ | 14 | 7 | 3 | 4 | 19-11 | 24 |
| Կեթաֆէ | 14 | 6 | 4 | 4 | 11-9 | 22 |
| Հուէլվա | 14 | 7 | 1 | 6 | 22-21 | 22 |

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ԼԵՒՈՆ ՕՀԱՆԵԱՆի մահուան տխուր առթիւ հետեւեալ անձեր կը յայտնեն իրենց ցաւակցութիւնները եւ փոխան ծաղկեպսակի իրենց նուիրատուութիւնը կը կատարեն Հ.Մ.Մ.ին, (Հայ Մարմնամարզական Միութիւն):*

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Սինան Սինանեան | $250 |
| Տէր եւ Տիկ. Սարօ եւ Հիլտա Յարութիւնեան (Նիւ Ճըրզի) | $250 |
| Տէր եւ Տիկ. Անդրանիկ եւ Արփի Սինանեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Կարպիս Սվաճեան | $150 |
| Օր. Զապէլ Զատարեան եւ ընտանիք | $150 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ Սինանեան | $150 |
| Տէր եւ Տիկ. Մարտիկ Մազմանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Արփինէ Պէյլէրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ժան եւ Սեդա Պալտատեան (Ֆլորիտա) | $100 |
| Տիկ. Սիրուն Կոստանեան (Ֆլորիտա) | $100 |
| Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Հէրի եւ Հիլտա Սինանեան | $100 |
| Տիկ. Էլիզ Թոսունեան (Նիւ Ճըրզի | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդգէս Սինանեան (Նիւ Եորք) | $100 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Նորա Սինանեան | $100 |
| Արի Մատիլեան եւ ընտանիք | $100 |
| Օր. Քէթի Հայէք | $100 |
| Տիկ. Մաքրուհի Սվաճեան (Նիւ Ճըրզի) | $100 |
| Տէր եւ Տիկ. Ժոզէֆ եւ Ռիթա Գալանճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Հէրի Սինանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ջոհրապ եւ Արփինէ Սվաճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վահէ եւ Սիլվա Աչճեան | $50 |
| Տիկ. Անգինէ Մուրատեան | $50 |
| Տիկ. Սոնա Աչճեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Վարդգէս եւ Մայտա Մանկրեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Արշակ Թումայեան | $50 |
| Մի ոմն | $20 |

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆ «ՄԱՍԻՍ»ԻՆ

*Մի ոմն գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը կը նուիրէ $100 տոլար «Մասիս»ի ֆոնտին:*

## ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՍՐԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*սութեան: Ձեռնադրուած 1892-ին, եւ եպիսկոպոս՝ 1911-ին Սահակ Կաթողիկոսէն որպէս Թեմակալ Եոզղաթի: 1915-ին Առաջնորդն էր Կիւրինի ուր եւ գլխատուելով կը նահատակուէր Վեր. Պետրոս Մուղալեանի հետ միասին:*

### ՅԱԿՈԲ-ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ

*Ծնած Կ. Պոլիս 1847-ին: Նախապէս վարած Եգիպտոսի Թեմի առաջնորդութիւնը, եւ 1915 Թուին տառապանքի տակ վախճանած Իզմիրի զինուորական բանտին մէջ «Կիլիկիոյ աղէտի մասին մատուցած իր տեղեկագրին մէկ պատճէնը իր Թուղթերուն մէջ գտնուած ըլլալուն համար»:*

### ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԲԱԳՃԵԱՆ

*Կ. Պոլսեցի, ծնած 1860 Թուին: Ձեռնադրուած Արմաշ 1886ին, եւ եպիսկոպոս՝ 1912 Թուին Գէորգ Ե. Կաթողիկոսէն: Մինչեւ 1915 կը վարէր Բալուի առաջնորդութիւնը, ուր եւս կը նահատակուէր նոյն Թուականին:*

*Ցանկագրուած նահատակ վարդապետներն են հետեւեալները.*

*Կոմիտաս Վրդ. Սողոմոնեան, միաբան Մայր Աթոռոյ, յայտնի երաժշտագէտ, որ Թէեւ բռնամահ չեղաւ, եւ սակայն մտաւորականներու հետ աքսորուեցաւ 1915-ի Ապրիլ 24-ին, եւ աքսորէն վերադարձին մնաց մտային հիւանդութեան ճիրաններուն մէջ եւ տարիներ ետք՝ 1935-ին վախճանեցաւ Ֆրանսայի հիւանդանոցներէն մէկուն մէջ: Մկրտիչ Վրդ. Ջլղատեան, Արմաշական, տեղապահ Տիարպեքիրի, 1915-ին ձերբակալուած 9 քահանաներով, հայ Կաթողիկէ եկեղեցւոյ առաջնորդ Անդրէաս Եպս. Ջէլէպեանի ու իր 3 վարդապետներուն, ու Վեր. Յակոբ Անտոնեանի հետ: Ջլղատեանի վրայ քարիւղ Թափելով Տիգրանակերտի մէջ, նահատակուեցաւ իր 9 քահանէնրուն հետ միասին: Սահակ Վրդ. Օտապաշեան, առաջին հայ հոգեւորականը եղաւ որ սպաննուեցաւ Թուրքերուն ձեռքով: Արմաշական, երբ Պրուսայէն Երզնկա պիտի երթար 1914ի Դեկտեմբերին որպէս Առաջնորդ: Տեղը չհասած իր ծննդավայր Սեբաստիոյ մերձակայ Էնտէրէս գիւղին մէջ կուսակալ Մուամմէրի Թիկնապահ՝ Ջերքէզ Ճելալ եւ իր ընկերները սպաննեցին զինք:*

*Արտաւազդ Վրդ. Գալէնտէրեան, Արմաշական բանաստեղծ հոգեւորականը կը նահատակուէր իր Եդեսիոյ առաջնորդական պաշտօնին վրայ, ուր ծաւալած էր վարչական, կրթական եւ քարոզչական գործունէութիւն: 1915-ի տարագրութեան ատեն Եդեսացւոց ընդդիմութեան մասնակից համարուելով, դատուեցաւ եւ սպաննուեցաւ: Պարգեւ Ծ. Վրդ. Դանիէլեան, Արմաշական, զաւառ կը մեկնէր, նախ Նիկոմիդիա եւ ապա՝ 1914-ին Պրուսա, ուր կը ձերբակալուէր ու կը դատուէր: Պատճառը Պարգեւի բուռն հակառակութիւնն էր երբ Թուրքեր ուզած են խուզարկել Պրուսայի հայոց եկեղեցին՝ զէնքեր փնտռելու պատրուակով: Տեր Զորի բանտին մէջ կը նահատակուէր 27 տարեկանին: Պսակ Վրդ. Տէր Խորէնեան, օծակից Պարգեւի, ուսումնասէր, բանահաւաք եւ բանասէր, նահատակուեցաւ Խարբերդի մէջ ուր առաջնորդական պաշտօն կը վարէր: Խարբերդէն դուրս հանուելով ճանապարհին սպաննուեցաւ 33 տարեկանին:*

*Շաւարշ Վրդ. Սահակեան, նախ Սեբաստիոյ եւ ապա Առաջնորդ Եւդոկիոյ: Արմաշական եւ օծակից Պարգեւի եւ Պսակի: Կը նահատակուէր Եւդոկիայէն երկու ժամ անդին՝ Ղըզըլ Էնիշի Կիւն Կէօրմէզ աղբիւրին մօտ, Սեբաստիա տարուելու պատրուակին տակ: Սուրէն Ծ. Վրդ. Գալէմեան, Արմաշական որ Բաղեշի Առաջնորդն էր երբ նահատակուեցաւ իր ժողովուրդին հետ 1915-ին, 29 տարեկանին: Գեղամ Վրդ. Թէվէքէլեան, Արմաշական եւ օծակից Սուրէնի, որ նահատակուեցաւ Քղիի մէջ իր առաջնորդական պաշտօնին վրայ՝ 28 տարեկանին: Համազասպ Վրդ. Եղիսէեան, Արմաշական, Սամսոնի եւ Ճանիկի Առաջնորդն էր երբ նահատակուեցաւ 51 տարեկանին:*

*Գէորգ Ծ. Վրդ. Թուրեան, ծնած Ռոտոսթօ 1872-ին, 1911-ին ձեռնադրուած Արմաշի մէջ ուր եւ դասաւանդած աստուածաբանութիւն եւ փիլիսոփայութիւն: 1912-ին Առաջնորդի տեղապահ ընտրուած Տրապիզոնի Թեմին, եւ 1915-ին տարագրութեան ճամբուն վրայ Կ. Պոլիս կը հեռագրէր Թէ «Կարին պատերազմական ատեան կը տանին զիս», եւ այնուհետեւ ոչ մէկ լուր իրմէ: Վարդան Ծ. Վրդ. Յակոբեան, Մշոյ Ս. Կարապետ վանքի միաբան, ծնած Սասուն 1846-ին եւ ձեռնադրուած 1880-ին: Կը վարէր Մշոյ Թեմի առաջնորդութիւնը, եւ 1915 Յունիս 27-ին Իթթիհատականներ կը կանչեն զինք ու քաղաքի երեւելիները որ Թողուն քաղաքը եւ մեկնին: «Շատ մը երեւելիներու հետ բոկոտն դուրս կը հանեն Մուշէն, եւ Ալի Ջռնան գիւղին մէջ կ'այրեն նաւթով»: Անանիա Ծ. Վրդ. Հազարապետեան, ծնած Սեբաստիա 1861-ին, եւ եղած միաբան Երուսաղէմի պատրիարքութեան: 1892ին Յարութիւն Վեհապետեան պատրիարքէ ձեռնադրուած: Եդեսիոյ Թեմին Առաջնորդ ընտրուած, յետոյ՝ Բաբերդի, ուր եւ նահատակուած 1915 Թուին:*

*Յոյս ունինք որ սոյն նախագիծը կարեւորութիւն կը ստանայ ու լրիւ կ'օգտագործուի իր ամբողջութեանը մէջ: Մեր կարծիքով անհրաժեշտ կը նկատենք Թողուլ անունները առանց յապաւումի, անպայման յատուկ եզրաբանութեամբ, ինչպէս նշուած է, ներառնելով չյիշուած հոգեւորականներն ու նահատակները, ինչպէս հնագոյն պարագաներուն յիշուած են մեր Տօնացոյցին մէջ:*

## ՇՈՒՇԱՆԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*Որոշեցի մօտից տեսնել եւ շօշափել արուեստագիտուհուն: Մօտեցայ, շոյեցի նրա շնորհաշատ ձեռքերը, գրկեցի տաքուկ իրանը: Կարծես լոյսի խրձիկ լինէր: Ինձ դիպաւ արարատեան դաշտավայրի հարազատ շունչը: Ջերմ եւ առինքնող էր այդ փխրուն աղջնակը: Ակամայից յիշեցի Զարենցի «Լուսամփոփի պէս աղջիկ» բանաստեղծութիւնը:*

*Շուշանիկը իր հոգեպարար նուագով, ասելիքի վեհութեամբ վերացած եւ այլափոխուած, անկաշկանդօրէն բացեց իր ներաշխարհը բոլորիս՝ զարմացնող անկեղծութեամբ եւ ապրումների հզօր պոռթկումներով:*

*Ես երաժիշտ չեմ, բայց գեղարուեստի երկրպագուն եմ եւ անվարան կարող եմ ասել, որ Շուշանիկը պիտի շարունակի զարդարել աշխարհի մեծ համերգասրահների բեմահարթակները՝ մարդկանց հաղորդակից դարձնելու վեհին եւ գեղեցիկին:*

*Սիրելի հայրենակից «Բարձրացրու որ բարձրանաս» առածն այստեղ շատ տեղին է: Խորին շնորհակալութիւն Համազգայինին իր վարած ազգօգուտ գործունէութեան համար:*

*Հայրենի արուեստագիտուհուն մաղթում ենք բարի երթ իր ասպարէզում եւ նորանոր նուաճումներ:*

## ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՀԱՅՑ. ԱՌԱՔԿԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՄԱՆ 65ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

*Շարունակուած էջ 8-էն*

*եանն ու իր ամուսինը, առ ի գնահատանք ու երախտագիտութիւն՝ ստանալու համար Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետին այս ծառայութեան շնորհած Ս. Ներսէս Շնորհալիի շքանշանը, յատուկ Սրբատառ Կոնդակով:*

*Կոնդակը ընթերցեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ.Արշակ քհնյ. Խաչատուրեանը, յոտնկայս ունկնդրութեամբը բոլոր հաւատացեալներուն:*

*Այս առթիւ, սրբազան հայրը օրհնեց նաեւ Ծխական Խորհուրդի նոր անդամ Մկրտիչ Թէքէրլէքեանը, որ այս ամիս պիտի ստանձնէ իր նոր պաշտօնը:*

*Պատարագէն ետք եկեղեցւոյ «Ճան Կոկեան» սրահին մէջ, ի պատիւ Սրբազան հօր տեղի ունեցաւ եկեղեցւոյ հիմնադրութեան 65 ամեակին նուիրուած ճաշկերոյթը:*


Jessica Demirdjian
Realtor®
Prudential
California Realty
9915 Mira Mesa Blvd., Suite 100
San Diego, CA. 92131
Bus: 858.653.6400
Fax: 858.653.6440
Cell: 619.846.7738
Cell: 760.622.6873
jessicad@prusd.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.

# NEW YEAR'S EVE DINNER-DANCE

ORGANIZED BY AGBU - AYA GLENDALE-PASADENA CHAPTER

## ENTERTAINMENT & SURPRISES

**SUNDAY, DECEMBER 31, 2006 – 8:00PM**

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104

***Music by DJ Heartbeat • Catering by La Fogata***

Special Program and Menu for Children in a Separate Hall

*Adults $75 / Children 12 and under $35 / Children 5 and under Free*

**RSVP - LIMITED SEATING**

*Call the AGBU Alex Manoogian Center (626) 794-7942*




**AGBU CENTENNIAL SPONSORS**

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.
BANK of ORANGE COUNTY
BOC
A Division of Placer Sierra Bank
Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market

Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720